

Մ. ՌԻՔԼԻ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴՄԷՋԷՆ

1949

ՏՊԱՐԱՆ «ԱՀԱՐՈՆԵԱՆ»

ՇՏՈՒՏԳԱՐՏ

Копия,
Exempl.

1

Մ. ՌԻՔԼԻ

308 (47.995)

~~11-54~~

~~11-54~~

A II 35107

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴՄԷՋԷՆ

~~2867-9~~

Գերմաներէնէ հայերէնի վերածեց. — Գ. Ծ. Վ. ՇԱՀԼԱՄԵԱՆ



1949

ՏՊԱՐԱՆ «ԱՀԱՐՈՆԵԱՆ»
ՇՏՈՒՏԳԱՐՏ

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ

«Քնական և ֆաղափակրթական պատկերներ կովկասեան երկիրներէն և Հայաստանէն»՝ գիրքը, որ զուիցցերիացի գիտական արշաւախումբ մը հրատարակած է նախորդ մեծ պատերազմէն առաջ, կարեւոր համարեցի ուշադրութեան առնել և հայերէնի թարգմանել. այն մասերը, որ մեզի կը հետաքրքրեն յատկապէս. այն է, 1. ռազմավիրական նախապարհէն թիփլիս, ապա 2. Հայաստան և Մասիսի վերելքը և 3. հայ եկեղեցւոյ նշանակութիւնը հայերու մշակութային և ֆաղափակրթական կեանքի մէջ:

Այստեղ համեմատութեան եզր մը կայ ցարական և ներկայ ֆաղափական և ֆաղափակրթական վիճակներու մասին, ուր բարեխղճօրէն կը պատկերացուի ռուսներու պետականութեան վիճակն ու ազդեցութիւնը կովկասի ժողովուրդներու՝ հայերու, վրացիներու, պարսիկներու, թաթարներու և ֆիւրդերու մասին, ուր պէտք է ըսել հայերուս ազգային ինքնասիրութիւնը գգուող բաւական տեսութիւններ կան: Կը յուսամ, որ սիրով և հետաքրքրութեամբ պիտի կարդացուի, որը եղած է միակ նպատակս:

ԳՐԻԳՈՐ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՇԱՀԼԱՄԵԱՆ



Մ. ՌԻՔԼԻ

ԲՆԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԷՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

ՆԱԽԱԲԱՆ

Տասը շաբաթուան մէջ ուրախութիւն և դառնութիւն իրարու հետ բաժնեցինք, մերք ամենանախնական պայմաններու մէջ, մերք համարեա իշխանական պատիւներով և պերժանքով ոգողւած: Մեր փանապարհը մեզ տարաւ նախ և առաջ Կոզմիսեան նախնական անտառներու ընդմէջէն. շատ մը ակնարկներ ձգեցինք վայրագ Կովկասի վրայ: Այցելեցինք շատ մը արևելեան քաղաքներ, իրենց խիստ բազմազան ժողովաւորներու խառնուրդով. առաջնակարգ ռուսական ջերմուկներ (բաղնիքներ), որ սեղմ տարածութեան մը վրայ կը պատահին. ամենահակասական քաղաքակրթական հակադրութիւններ: Եւ շարունակ նոր տեսարաններ յարձակեցան մեր վրայ: Բռնժոմի մեկուսացած անտառները, լեռնային հրաշալի օդն ու բուսականութիւնը, Բագուի, Անիի, ընդարձակ, չոր տափաստանային երկիրները՝ Հայաստանի, իրենց աշխատասէր բնակչութեամբ, աստանդական աւազակաբարոյ քիւրդերը, շրջագան Արարատի — Մասիսի ուրուագիծը, հանոյալից ավերը Գեօկչա—Սևանայ լճի, Բագուի նշանաւոր նաւթափաղաքը, սիրելի Սարեպտան և վերջապէս ռուսական մեծ պետութեան սիրտը՝ Մոսկուան իր աշխարհահռչակ կրեմլով, լի պատմական, յանալս քստմնեցուցիչ յիշողութիւններով:

Այս ամենը և դեռ շատ անելին ստացանք, դրամագլուխ մը, որով դեռ տարիներ պիտ ապրինք և որ մեր կեանքը շատ մը

տեսակէտներով հարստացուցած է: Հին ապրուած երևակայութիւններ մէկ կողմ նետուեցան, շատ մը արմատացած գաղափարներ փոփոխուեցան, աչք ու սիրտ ընդլայնեցան: Այս բանը կը համարի՞մ գիտական արդիւնքներուն կից, գլխաւոր օգուտը այսպիսի ուսումնասիրական ուղևորութեանց:

Այս տողերու նպատակն է, այս ամենը պահպանել, այնպիսիներուն իբրև ուղեցոյց ծառայեցնել, որոնք այս նախնական, արևմտեան եւրոպացիներու կողմէն քիչ անգամ այցելուած երկիրները նմապարհորդել կը ցանկային: Սա հաւաքական գրուածք մ'է կազմուած մեծ մասամբ բանախօսութիւններէ, յազրական յօդուածներէ և գիտական աշխատութիւններէ: Ան կը ցուցնէ բոլոր լուսաւոր և ստուերաւոր կողմերը այսպիսի ձեռնարկի մը. խիստ բազմակողմանիութիւնը ամենաբազմազան կալուածներու, որ չափազանց մասնագիտացած ներկայի մէջ անհատներէ հազիւ թէ այս ծաւալով կրնայ սպասուիլ: Ասկէ գատ կարելի չեղաւ պատահական կրկնութիւններէ խուսափիլ: Ասոնք հազիւ թէ խանգարեն: Անհատական բնոյթը և ըմբռնումի տարբեր եղանակները առանձին հեղինակներու, հոս հրապարակ կուգան գերազանցօրէն: Եւ այս պատճառաւ աւելի զրդող ազդեցութիւն պիտ ընեն ընթերցողներուն վրայ:

Շնորհակալութիւնս աշխատակիցներուն իրենց քանկազին օժանդակութեան համար: Մասնաւոր շահեկանութիւն պիտի կըրնայ ունենալ շատերու համար Մեսրոպ Եպիսկոպոսի յօդուածը՝ «Հայ եկեղեցիի նշանակութիւնը հայերու մշակութային և քաղաքական կեանքի մէջ»: Մանաւանդ այժմ, երբ հայկական խընդիրը վերջերս այժմէականութիւն կ'ստանայ: Լուսաբանութիւն մը այսպիսի հեղինակաւոր կողմէ մը կրկնակի ուշադրութեան արժանի է և այլն և այլն:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Իրրե հսկայական հազարակիցութեան թշնամի անջրպետ կողմից կը բարձրանայ Եւրոպայի և Ասիոյ սահմանին վրայ:

Ոչ հեռու Կուրանի գետաբերանէն, թուրքական Անատոլա բերդի մօտ «Պուշկին» շոգենաւէն տեսանք այս լեռնաշղթան, նախ իրրե ցած, թեթեւ ալիքներով, անտառապատ ըլլազարդ սարմատական տափարակէն վեր բարձրանալու ընթացքին: Նոյնպէս երեւցաւ մեզի ան իր արեւելեան ճիւղերուն մէջ, Բազուի մօտ, նաւթառատ Ապշերոն թերակղզիի վրայ: Հեռաւորութիւնը կովկասեան բարձրալեռներու այս երկու ծայրակէտերու՝ 1200 կիլոմետրէ աւելի է օդային դժով: Իսկ եթէ հետեւինք գլխաւոր ջրարաչիւի բաղմապիւի օձապատոյտ գծին, այն տուն 1400 կիլոմետրէ աւելի է:

Դլխաւորարար արեմտեան հիւսիս արեմուտքէն գէպի արեւելեան հարաւ արեւելք ընթացող կովկասը կղզիացած լեռնադօտի է, ան նոյն ուղղութեամբ ընթացող ընդ ծովեայ շեմի մը միջոցաւ, որ Կոստլից լիճը կը բաժնէ ցած հիւսիսային և բաւական խորունկ հարաւային մէկ-մէկ աւազանի, ան կը յառաջանայ անդրկասպեան երկրի մէջ՝ Մեծ Բալխուն (1661 մ.), Կոսթա-Տադ (1915 մ.) և Հինգուքուշ (1500 մ.) անուններով իրրե իր բնական շարունակութիւնը: Այսպիսով Կովկասը պէտք է ընդունել կեդրոնական Ասիոյ լեռնաշխարհի հիւսիս-արեմտեան ճիւղը:

Կովկասը գեռ ուրիշ կողմով ալ ուղղակի միացած է բարձր Ասիոյ հետ: Մեծիկեան կամ Սուրամի լեռնաշղթան — որ միջօրեական լեռնաշղթայ ալ կը կոչուի՝ կը կազմէ միայնոյ կամուրջը գէպի հարաւ ընկած փոքր-կովկասի և ասով հայկական բարձրաւանդակի: Այսպէս Անդրկովկասի մէջ կը յառաջանայ երկու գետային գրութիւն: Փոքր Բրինը, հներու Փատիսը, իր արեմուտքի ջրերը կը թափէ Սև ծով: Կուր գետը կը դառնայ գէպի արեւելք, անապատային Մուղանի տափաստանի ընդ մէջէն Կոստլից

ծովը թափելու: Մովէն 756 մեթր բարձրութեամբ կը ծակէ Բաթում-Թիֆլիս երկաթուղադիծը 3,5 կմ. երկարութեամբ փապուղիով մը առիշեղ լեռնաչգթան, փոնի կիրճը, որ ամենացած լեռնանցքն է, ընդհակառակն կը հասնի զեռ 1197 մ. բարձրութեան:

Ստաւրոպոլի բարձրաւանդակի (611 մ.) մէջ կը գտնուի Կովկասի հիւսիսային զառիթափին վրայ հարաւի Մեօկեան լեռներու զուգընթացը: Անոր վրայ ընկած է Այսր Կովկասի Պոնտոս-կասպիական ջրաբաշխը: Ասկէ ըզխելով Կուբան և Արեմտեան Մանիչը կը հոսի Պոնտոս, իսկ Թերէք-Կուբա և Արեւելեան Մանիչ կը թափին Կասպից ծով:

Այս քանի մը նկատողութիւնները կը բաւեն աշխարհագրական ընդհանուր տեղորոշման համար:

(Այնուհետեւ հեղինակը կը խօսի Կովկասեան լեռնաչգթայի, սառցադեփերու և երկրաբանական կազմութեան մասին. այնուհետեւ կը համեմատէ Կովկասեան լեռները ալպեան լեռներու հետ թուելով մէկին և միւսի առաւելութիւններն ու պակասութիւնները. երկրի կազմի, բնակչութեան, հաղորդակցութեան և այլն) ապա կը շարունակէ:

Եթէ ճանապարհորդութեան ծրագիրը իր էական կէտերով կարելի եղաւ յաջողցնել, կը պարտինք հզանակի արտասովոր նըպաստաւոր հանգամանքին հետ. ամենէն առաջ ռուսական պաշտօնէութեան և իր օրգաններու արտակարգ վերաբերումին և Կորովի օժանդակութեան: Բարձր զաշնակցային խորհուրդը Պետերբուրգի զուիցերական դեսպանութեան միջնորդութեամբ մեղ ներկայացուց կայսերական ռուս կառավարութեան բազմաթիւ խորհուրդներն ու յանձնարարութիւնները, որ Պետերբուրգի կայսերական գիտական կաճառը մեղի տուաւ, որ ասկէ զատ ամբողջ ձեռնարկութիւնը իր հովանաւորութեան տակ առած էր: Մոսկուայի արհեստագիտական զիտութեանց տարածման ընկերութեան գործադիր մարմնի, Կովկասեան ալպեան ակումբի նախագահութեան, Օդեսայի Խրիմ-Կովկասեան լեռնային ակումբի վարիչ մասնախմբի ֆանքերը մեղի ամենամեծ օգուտը տուին: Կրկին ու

կրկին նշանաւոր ռուսական պաշտօնակիցներ, երբեմնի ուսանողներ զաշնակչային արհեստագիտական բարձրագոյն վարժարանի, զուիցերական հիւպատոսարաններ և հայրենակիցներ բարեհասութեամբ և անձնութեամբ իրենց զիրենք մեր արամագրութեան տակ զրին: Ամենուրեք կը վայելէինք մաքսային ամենահարաւոր դիւրութիւնները:

Բոլոր այս կէտերը, զորս հոս մասնանշեցինք միացած աշխարհածանօթ ռուսական հիւրասիրութեան հետ, զորս վայելեցինք ամբողջութեամբ և ծաւալով, որ զլեցին անցան մեր արդէն խիստ լարուած ակընկալութիւնները, էապէս զիւրացուցին ռուսամասիրական ուղեւորութեան կատարումը:

Այսպէս ուր ալ որ հասանք, ոչ միայն զրկարաց, այլ յաճախ դիւթիչ սիրելութեամբ ընդունուեցանք: Առանց այս բացասիկ նպատաւոր նախապայմաններուն մեր ճանապարհորդական ծրագրի ինչինչ մասերը, օրինակ՝ Կլուխոտի ճամպորդութիւնը և Արարատի վերելքը անկարելի էր կատարել:

Մեծ զոհունակութեամբ կը նայինք, այս պատճառով այս ռուսամասիրական ուղեւորութեան վրայ: Մեզի համար ստիպել պէտք մը և միաժամանակ պատուոյ պարտականութիւն մ'է հոս բոլոր անոնց, որ ազնւօրէն հարթեցին մեր ուղին և մեզի խօսքով, թէ գործով օժանդակեցին, սրտազին կը յայանինք մեր խորին զգացումներով, ամենասրտազին շնորհակալութիւնները:

Հոս զանց կ'ընենք Յիւրիսէն մինչև Օդեսա եղած ճանապարհորդութեան և տպաւորութեան նկարագրութիւնն ու թւումը: Ինչպէս նաև մինչև Արիւազիա և վրացական սպամուդիով Թիֆլիս հասնելը:

Մենք դարձեալ Սև ծովէն Կասպից ծով տանող երկաթուղիի վրայ ենք և ժամը չլրացած հասանք տաք Թիֆլիսը, որ իր զիրքով, կառուցուածքով և ժողովուրդներու խառնուրդով առաջաւոր Ասիոյ ամենահետաքրքրական քաղաքներէն մէկն է: Հոս կը վերջանայ մեր ճանապարհորդութեան առաջին մասը:

Սիբայօթար եղանակով պաշտօնեաները մեզի համար, իրրև

իջևան պատրաստած էին Ա. դիմնադիրներ: Սա մեծ առաւելութիւն մ'էր, նաեւ, քանի որ յետագայ բոլոր ձեռնարկութիւններու համար Անդրկովկասի մէջ Թիֆլիսն ընտրած էին մեզի բնակավայր: Պետական հաստատութեան մեզի տրամադրած սենեակներու մէջ կարող էինք այժմ անխանգար ծրարները փոփոխել եղած հաւաքածոներն ու դնումները դասաւորել եւ մեր բացակայութեան ժամանակ աւելորդ ծրարները ապահով տեղ մը թողնել:

Առաջին դիմնադիրներ կը գտնուէի քիչ մը բարձր դիրքով Դաւիթ լեռան արեւելեան կողին, ուստական քաղաքամասին մէջ, առաջնակարգ Գոլովինսկի Պրոսպեկտ փողոցի վրայ, որ լայն մեծ քաղաքային կառուցումով ծառուղի մ'է եւ այսպիսով կեդրոնական դիրքի ամեն առաւելութիւնն ունի: Ասոր հանդէպ կը զբաղուէի 1871—97-ին շինուած հոյակապ գմբէթաւոր զինուորական մայր եկեղեցին եւ փառքի տաճարը: Հոյակապ շէնք մը պատմական նկարներով եւ յաղթանակներով կտրկասեան երկիրներու նուաճումի պատմութեան վերարեբեայ: Միայն քանի մը քայլ հեռու կը գտնուէի նահանգապետի պալատը, զինուորական հրամանատարութեան շէնքը եւ կովկասեան թանգարանը, որուն կովկասի դրացի երկիրներու պատմական ուսումնասիրութեան վերաբերեալ նշանաւոր հաւաքածոները գծրազգայարար անմատչելի էին: Այժմ նոր շէնք մը կը կառուցուէի եւ մինչեւ անոր աւարտելը հարուստ գանձերը ամփոփուած են սնտուկներու մէջ:

Իայց մեր հետաքրքրութիւնը դրաւած չէ գլխաւորաբար եւրոպական թաղը իր փառաւոր պետական շէնքերով, չքեղ ճաշարաններով, դրամատուներով, թատրոններով եւ մեծ տեսարական տներով, որ կտրուած է լայն, ուղիղ փողոցներով, իր հանրային պարտէզներով եւ մեծավայելուչ կեանքով, որու մէջ զինուորական մասնաւորապէս աչքի կը զարնէ: Երբ մենք այժմ Թիֆլիսի մասին կը մտածենք մեր առաջ կը պատկերանան շարունակ երեք տեսարան՝ տեղայիներու թաղը իր բաղարներու բազմապիսի կեանքով, բուսարանական պարտէզը եւ սքանչելի տեսարանը

350 000—է աւելի բնակիչ ունեցող մեծ քաղաքի վրայ Դաւիթի լեռան բարձրութենէն:

Հայ, վրայի, թաթար, պարսիկ կը բնակին առանձին թաղերու մէջ. նեղ անկիւնաւոր, յաճախ զաւրիւք փողոցներով: Ամբողջ բնակչութեան հարիւրին քառասուն և հինգ մասով հայերը կը գրաւեն առաջին տեղը: Ասոնց բնակավայրը ընկած է բերդի լեռան հիւսիսային կողին, ուր ժամանակաւ պարսից փոխարքայի բնակարանն էր, այժմ սակայն դեռ պսակուած կը մնայ զեղանկար աւերակներով, որ սակայն իր հսկայական տարածութեամբ դեռ գազափար մը կընայ տալ Պարսկաստանի այս յենարանի երբեմնի կարեւորութեան մասին:

Թիֆլիսը 1801ին անցաւ ռուսներու ձեռքը, պարսկական ժամանակէն այս աւերակներէն զատ ըստ մնացած չէ: Պարսիկներու թիւն անգամ պակսած է, հայերու մօտ կ'ապրին անոնց հետ թշնամացած թաթարները: 1905ին յեղափոխութեան տարին երկու ժողովուրդներու մէջ տեղի ունեցաւ քաղաքի մէջ, օրերով կռիւններ:

Կուրի ձախ ափին ընկած են վրայական թաղերը և աւելի դէպի հիւսիս երկաթուղիի կողմերը գերմանական քաղաքամասը, նախ բնակչութիւն հաստատած գերման զաղթականներու կողմէ, որ արդէն 1858ին Վիւրթենբերգէն զաղթած էին: Գերման տարրը սակայն, այն ատենէ սկսած, ետ մղուած է մեծ մասամբ ռուս արհեստաւորներէ և խանութպաններէ:

Ամեն Թիֆլիս զաւուռ մեր քայլերն ուղղուած էին բնիկներու թաղերը, ժամերով, նոյնիսկ օրերով պտտած ենք և ուրախացած ի տես բազմազան արեւելեան շարժուածիւրու և ամեն անգամ նոր բան մը տեսած ենք: Վաղ առաւօտէն մինչև մութ դիշեր ժողովուրդը կը վիստայ միայն կէսօրուայ տաք ժամերուն մարդկային հոսանքը քիչ մը կը պակսի, զանգաղաշարժ երկանիւ սայլեր, զարդարուն կառքեր, էշերու ծանրարեւոտաւ կարաւաններ, հեծեալներ հպարտ ձիերու վրայ, երբեմն նաև մէկ—մէկ ուղտ, ուղտաւորներ: Առաջաւոր Ասիոյ և կովկասի լեւնարնակներու ա-

մեն տեսակ ցեղերու մասեր զիրար կը մղեն անընդհատ շարքերով: Հոն կը տեսնուին քողաւոր մահճատական կանանց լռիկ անցքը. ծանրաքայլ, դէմքը կարծես քարէ քանդակուած, գեղեցկօրէն նուրբ ճերմակ ժանեակներով շրջանակուած. ալլապէս սեհագնուած կը յառաջանայ փողոյէն, բարձր դասի վրայուհին: Ամեն մի շարժումը վայելուչ է և հանդարտ: Այս բոլոր պառաւ յարգարժան կանայք իրարու կը նմանին շփոթուելու աստիճան: Այր մարդիկ, որ կռնակի վրայի փոքր համետով մը անհաւատալի, յաճախ քանի մը կենտինար ծանրութեամբ բռններ արագօրէն խառնիճաղանձի մէջէն կը տանին նոր ի նորոյ մեղի զարմայնելով:

Այս բանը պէտք է Յիւրիի բռնակիրներուն ցուցնել, թերեւս զրդիչ ազդեցութիւն ընէ: Երեք մեթր բարձրութեամբ հակեր, ծանր սնտուկներ, երկու-երեքը իրարու վրայ, մեծ կարասիներ, նոյնիսկ պաշնակ մը, այս ձևով փողոցէն անցնելը տեսանք: Յընցոտիներով թաթարներ կը պտտէին այս ու այն կողմը. բան մը չընէլը կ'երևի թէ անոնց պիտաւոր զրազուիմն է. ամենաանկարելի զիրքերով կը տեսնուին փողոյներու անկիւնները, տան նրբանցքներու մուտքին կամ սանտուղներու վրայ քնացած: Խուճար մը պարսիկ, գեղեցիկ, փառաւոր, պարարտ մարդիկ տարիքի լիակատար զօրութեան մէջ, ճերմակ չերքէզկայով և բարձր ճերմակ ոչխարի մորթէ գլխարկով հարուստ վաճառականներու կը նմանին: Տխուր տեսարաններ կը պարզեն բանտարկեալներու յաճախակի տեղափոխութիւնները: Մանր երկաթէ շղթաներով, ընկերացած սուրինաւոր զինուորներով կը տանին ռճրագործները փողոյներու մէջէն:

Ինչպէս մեր միջին դարու քաղաքներու մէջ, այսօր ալ իւրաքանչիւր արհեստ ունի իր առանձին փողոցը կամ փողոցները: Անհաւատալիօրէն մեծ է զարդի և զէնքի խանութներու թիւը. անսովոր աշխատասէր են մուճակ կարողները: Վատ փողոցներու և լեռնային քարքարոտ տեղերու մէջ դօրձը երբեք չի պակսիր. դէպի փողոցները մեծ մասամբ լայնօրէն բաց են խանութները,

յաճախ իրրեւ աշխատանքի վայր ալ կը ծառային: Հոս կը տեսնուին դանակ սրող, կաթսայադործ, մսավաճառ, հոն կը ծախեն հրաշալի խաղող, հոս ձմերուկ, մեթրներով բարձր գիլուած: Այծքաղի և քարայծի եղջիւրներ, արջի մորթ մեծ քանակութեամբ կը զտնուին քանի մը փոքր խանութներու մէջ. հոս կարելի է քանի մը կոպեկով արեւելեան սափսր մը ձեռք անցնել: Մասնաւորապէս կը վնտռէինք կրկին ու կրկին դորդավաճառները: Մեր մէկ հայրենակցի օգնութեամբ անոնց քով ժամեր անցուցինք և շատ մը գեղեցիկ կտորներ տուն տարանք: Այս սակարկութիւնն ունի իր բոլորովին առանձին հրապոյրը. մեզմէ մէկ քանիին համար սա գրեթէ մոլութիւն դարձած էր, բայց երբ տունը այս բոլոր գանձերը բացինք տեսնելու, երեւցաւ, որ այս քանակութիւնը չէր բաւեր բոլոր պահանջներուն զոհացում տալու համար: Գորզի առուստրէն պէտք է հասկնալ: Հին դորդերը շատ անգամ փողոցի մէջ կը պատրաստեն: Անգիտակ իւրաքանչիւր անցորդ մեղսակից կը լինի. նա կը կոխկռտէ գորգը և քիչ մ'ալ փռչի հոն կը թողնէ: Հարիւրներ ու հազարներ օրական անոր վրայէն կ'անցնին: Այսպիսով դորդը արագօրէն կը հիննայ և իր արժէքը շուտով կը բարձրանայ:

Անցնենք այժմ տներուն: Նկարագեղ խառնաշփոթ մ'է: Ծէնքերու որոշ ուղղութիւն, օրէնք չի կայ: Ով ինչպէս ուզէ այնպէս կը շինէ: Այս նկատումով ոռոսական մեծ պետութեան մէջ կը տիրէ աւելի անպատեթիւն, քան մեզ մօտ «ազատ» Զուիցարիոյ մէջ:

Կը կարծուի, թէ քաղաքը իր անունը կը պարտի ծծմբային աղբիւրներուն—Ջերմուկներուն: Թիֆլիս բառը կը հանեն վրացերէն «Թիլի», տաք բառէն: Դեռ այսօր ալ մեծ հռչակ ունեցող բաղնիք—Ջերմուկներու ամենահին յիշատակութիւնը կը հասնի մինչև ե. դարը: Արդէն գ. դարու սկիզբը կը յիշուի Թիֆլիսը իր բնական քաղաքը վրացական թագաւորութեան:

Կովկասեան թանգարանի քով, որ կովկասեան երկիրներու ուսումնասիրութեան բազմարդիւն աշխատող Գոլոստաւ Բադգէի նըշանաւոր գործն է բուսաբանական պարտէզը և բուսաբանական

Թանգարանը երկրորդ կարևոր կեդրոնն է գիտական ուսումնասիրական գործունէութեան, որուն այցելութիւնը խիստ յանձնարարելի է Անդրկովկաս ճանապարհորդող բնախոյզներու համար:

Հոս գործի ղեկավարութիւնը կը գտնուի Բաղդէի փեսայ ուսուցչապետ Ա. Ֆոմի ձեռքը, որ մեծ բարեացակամութեամբ ըստանձնեց հաստատութեան և պարտէզի ցուցումը:

Բուսարանական հաստատութիւն (institut) կը գտնուի քաղաքի հարաւ տրեւիկան կողմը անմիջապէս հին բերդի աւերակներու քով: Այս բարձրութենէն զիտել արժէ: Տներու ծովէն աւելի մօտ է մարդ, քան Դաւիթի լեռնէն, բայց տեսարանը չափ մեծ չէ: Աշխատանոցի (laboratorie) անմիջապէս շէնքին տակ կը գտնուին հայկական, թաթարական թաղերը իրարու խառնուած և իրարու վրայ դարսուած. յաճախ կիսաքանդ տներով և նշանաւոր բաղնիքներով...:

Հաստատութեան անմիջապէս կցուած է մեծ բուսարանական պարտէզը: Մէջէն կ'անցնի առուակ մը ունեցող ձոր մը, որ վարը կիրճի պէս կը նեղնայ, վերը կը լայննայ և կը հարթանայ: Քիչ բուսարանական պարտէզ կայ, որ այսչափ բազմազան գետնի ձևեր ունենայ և այսչափ գեղեյիկ տեսարան. վարչութիւնը հրաշալի կերպով ըմբռներ է օգտագործել նպատակայարմար պարտէզի համար: Աւելի հին, խոնաւ կրճանման մասը այդ պարտէզին կը պարունակէ համարեա փարթամ, առաւելապէս փայտ ունեցող բոյսեր ենթարեաղարձային բուսական աշխարհէն: Մեզի համար մասնաւորապէս թանկագին է կովկասեան բաժանումը, որ կը ձգտի ըստ կարելոյն կատարեալ հաւաքածու մը ունենալ կովկասեան տեսակներու: Նմանապէս ընդհանուր ուշադրութեան արժանացաւ աղարոյսերու (halophta) մասը: Հոս փորձած են տալ ընդհանուր տեսութիւն մը Մուղանի տափաստաններու, Հայաստանի և անդրկովկասեան երկիրներու ամենակարևոր աղարոյսերու տիպարներուն:

Երեկոները կրկին ու կրկին կ'երթայինք Դաւիթի լեռը՝ Պրոսկայան (997 մ.): Կը նստինք պարանաքարչ երկաթուղին և շուտով

կը հասնինք օդաւէտ, չոր, բոլորովին անծառ բարձրութիւնը տը-
ներէն մօտ 500 մ. բարձր: Մեր սաքերու տակ ընկած է Անդրկով-
կասի մեծ մայրաքաղաքը և անմոռանալի տեսարան մը: Բոլորո-
վին լերկ գետինը, խանձող արեւէն ամբողջապէս այրուած, աւճե-
լլուրներով ու լեռներով չըջնալատուած կը տարածուի, որչափ
աչքդ կը դօրէ, դէպի հարաւ: Հիւսիսային կողմը հեռուն երթալով
բարձրացող բարձր Կովկասի լեռնադարիսպը կը սահմանէ հորի-
զոնը: Միայն բազմաթիւ գալարներով հոսող Կուրի երկայնքին
կ'երևան քանի մը ծառախուժ և փոքր անտառակ մը: Քաղաքը
գետահովտին կը հետեի տասը կիլոմետրէ աւելի տարածութեան
մը վրայ: Կուրը խորունկ առչտ մը փորած է բերդի լեռան քով
հասնելով մինչև 32 մ. լայնութեան միայն: Քաղաքի մէջ ջրի ան-
կումը (գառիվայր) 18 մետրի կը հասնի և կը դարձնէ բազմա-
թիւ իրարու քով ընկած ջրադաշներ: Լայնատարած տներու ծո-
վին մէջէն կը բարձրանան 50 եկեղեցի. մեծ մասամբ խոշոր դըմ-
բեթաւոր շէնքեր կանաչ տանիքներով: Հսկայական զօրանոցները
կը ցուցնեն աւելի կարենք ուղղափառական դիրքը: Ասոնց ոչ մի-
այն բոլորը զրաւուած են, այլ և կը տեսնուին քաղաքի հիւսիսային
արեւմտեան կողմը շատ մը ընդարձակ վրանախումբեր: Հաճելի-
օրէն աչքի կը դարնեն եւրոպացիներու թաղի մը ազատ ճարտա-
բարդութիւնը, զեղեցիկ վիլլաներ պարտիզատներով և զրօսա-
պարտէզներով: Բազմաթիւ կամուրջներ, որոնցմէ անցնելու հա-
մար զեռ մասամբ տուրք կ'առնուի, կը միացնեն Կուրի երկու
ափերը:

Օտարոտի ազդեցութիւն կ'ընէ այս քաղաքը իր համարեա
անապատային չըջնալատութիւն: Իր բարդաւաճումը կը պարտի գլխա-
ւորարար իր արտասովոր նպատատուր հաղորդակցական գիրքին,
գտնուելով Սև ծովէն Կասպից ծով տանող ճանապարհի և վրա-
ցական ուղղուղիի ելքին, որ մեծ կեղերոնական կովկասեան հա-
ղորդակցութեան երակն է և դէպի ուռսական Հայաստան տա-
նող ամենանպաստաւոր անցքի զիւար կտրող տեղի վրայ կը
գտնուի:

Արագ վրայ կը հասնի գիշերը: Դեռ երկար ատեն խորատուզ-
ւած կը մնանք մայր մտնող արեւի տեսարանին մէջ: Քանի մը
վայրկեանէն ան կ'ընկղմուի փոշեղից օդի մոգական վարդ-մանու-
շակագոյն երանգի մէջ: Այժմ կը տիրէ վերջալոյսը, բայց վարը
քաղաքի մէջ լոյս մը կը փայլիլի ուրիշի մը քով, այսպէս հա-
րիւրներ ու հազարներ և աւելի: Աստղալից յարգեցողի նման կառ-
կածի, կը փայլիլի դէպի վեր մեզի և ինչպէս մոնչիւնը հեռա-
ւոր ժայռահար ծովի մը ձայները կը բաղխին մեր ականջներուն:
Սա մերթ տկար, մերթ աւելի զօրաւոր դգալի հիմնաձայնն է, զոր
բազմադրազ, երբեք չգաղարող կեանքը մեծ քաղաքի մը դէպի
իրմէ վեր գտնուող մթնոլորտին կ'ուղարկէ: Իսկ վերը, երկնակա-
մարին վրայ կ'երևան աստղերը մեծ բազմութեամբ և կը մրցակ-
ցին իրենց երկրաւոր մրցակցին հետ փայլուն և փոփոխուն վառ
գոյներով: Սակայն հոս վերը կը տիրէ խաղաղութիւնը: Այս այն
տեղն է, ուր արամադրութիւնն ու միտքը կը ձգտի դէպի ընտա-
նի յարկը, ծովերու, լեռներու, երկիրներու վրայէն, որ անցեալն
ու ներկան կը միախառնեն:

Մօտակայ լեռան ետեւը կ'երևայ լուսինը: Իր աղօտ լոյսը մեզ
կ'արթնցնէ մեր երազներէն: Սա մեր հրաժեշտն է Թիֆլիսէն-
բայց ո՞վ է որ կ'ուզէ մեզ պարսաւել, որ այս հրաշալի գիշերը
դեռ այսօր ալ մեր մէջ ուժգին կ'արձագանգէ: Ինքնամոլորմով
խաղաղ ժամերը խիստ սակաւ են և շատ շուտով կ'անցնին:

Մ. ՌԻՔԼԻ ՆԻ Յ. ԶԷԼԻԿ

ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԽԱՆԴԱԿԻ
ԸՆԴՄԷՋԵՆ

Այսօրուան կարգախօսն է դէպի հայկական բարձրաւանդակը:
Հոս մեզի պիտի պատահին բոլորովին այլ պարազաներ: Հայաս-
տանը հսկայական բարձրաւանդակ մ'է, որ կը տարածուի իր կեդ-
րոն Մասիսի (Արարատ) շուրջը և կը ցուցնէ 1000էն մինչև 1900
մէթր միջին բարձրութիւն: Բազմաթիւ լեռնաշարքեր կ'անցնին
ընդարձակ երկրի վրայէն և զայն կը բաժնեն շարք մը առաւել
կամ պակաս անջատ դաւառներու: Խորագոյն տեղերու մէջ հա-
ւաքուելով ջրերը կը կազմեն լճեր, մասամբ բաւական ընդար-
ձակ տարածութեամբ: Ասոնք ունեն երբեմն անուշ, երբեմն աղի
ջուր: Այժմ ալ զեռ իջնող, կարմրախայտով հարուստ Գէօկչա
(Սևանայ) լիճը, որ Կասպոյտ լիճ կը նշանակէ, իր 1393 քառա-
կուսի կիլոմէթր տարածութեամբ, երեք անգամ աւելի մեծ է
Ժնևի լիճէն: Նւ այս ահագին տարածութեամբ ջուրը կը զտնուի
ծովի մակերևոյթէն 1933 մէթր բարձրութեան վրայ:

Քանի մը մարած հսկայական հրաբխային լեռներ, ինչպէս
4098 մէթր բարձրութեամբ Արագածը. — (Ալագեաղ), պարսկա-
կան հողի վրայ գտնուած Սաւալանը (4813 մ.) և Մեծ Մասիսը
(5162 մ.) կը գտնուին բարձրաւանդակի վրայ և կ'իջնեն բարձ-
րէն երկրային տեսարանի վրայ: Երասխը (Արաքս), գլխաւոր ջրա-
տար երակը կը կազմէ 350 կմ. երկարութեամբ պարսկա-ուսա-
կան սահմանը, այնուհետև անցնելով Մուղանի ամայի տափա-
տաններու մէջէն կը թափի Կասպից ծովը:

Հալառակ Կողքիսեան անտառաւ երկրին, իր նոր բնակու-
թիւններով, հայկական բարձրաւանդակը անտառապուրկ, շատ հին



մշակուած երկիր մ' է: Միայն գետերու ընթացքին և ցած վայրերու վրայ կ'երևան քիչ մը խզճուկ ծառեր: Ուր որ երկիրը չի ծրուիր, կը տիրէ տափաստանը, որ յաճախ անապատային կերպարանք կ'առնէ: Երկրի հարախային կառուցուածքը, իր այս շորութեան կը նպաստէ: Հակառակ ասոր, սակայն Հայաստանը ունի նշանաւոր պտղարերութիւն: Մեծ մասամբ խիստ ձմրան կը յաջորդէ կարճ գարուն մը և նախամայի մը և ընդարձակ տարածութիւններ կ'ըզգեստաւորին հիւթեղ կանաչով: Բազմաթիւ ծաղիկներ կը զարդարեն բազմերանդ մարգերը: Բայց այս շքեղութիւնը երկար չի տևեր: Արդէն Մայիսի վերջերէն սովորաբար կը դադարին անձրևները քանի մը ամիս: Այրող արևը կը հասցնէ շուտով հունձքը և վերջ կուտայ գարնան քնքոյշ բուսականութեանը: Քարքարուտ, չոր գետնի վրայ կ'երևան մաս մը իւրայատուկ բոյսեր, շատերը փոքր և շատ փոքր տարածութեամբ, բոլորն ալ յարմարած զարմանալիօրէն իրենց կարօտ կենսապայմաններուն:

Մշակութային. — պատմական տեսակէտով Հայաստանը մարդկութեան նախապատմութեան համար ամենահետաքրքրական մասն է աշխարհի: Բարձրաւանդակը կը գտնուի հին աշխարհի կեդրոնը: Մասիսը հաւասար հեռաւորութիւնն ունի Բաբելոնոյ հրօսանդանէն և թէ Բերինգեան նեղուցէն, համարեա հաւասար հեռուն Ատլանտեան և Խաղաղական ովկիանոսներէն: Շատ մը ազգերու աւանդութիւններ, ամենէն առաջ Աստուածաշունչինը կ'ըսեն, թէ այս կեդրոնէն յրուած են ազգերը իրենց ներկայ բնակութիւնները: Նոյն բանն է նաև հնդկերոպացիներուն համար: Եւ հայ ժողովուրդը նախաժողովուրդ մ'է մաքուր արիւնէ, լաւազոյն արիւնէ, մարմնի և հոգեմտաւոր ձիրքերով: Մարդկութեան ամենազեղեցիկներէն կարելի է համարել, մանաւանդ այրերը առաջացած տարիքի մէջ ունին զիրզ, հոժկու կերպարանք, ծերութեան մէջ ամեն մէկը պատկառազգու նահապետ մ'է:

Այն աւանդութիւնը, թէ Մասիսը (Արարատ) սուրբ լեռը, որ զեռ այժմ դայն կը կոչեն շրջապատող ժողովուրդները, այն կէտն է եղած, ուստի մեծ ջրհեղեղէն վերջը մարդկային սերունդը մեկ-

նած է երկիրը բնակելի դարձնելու համար, ապահովարար իր պատմական հիմնապատճառն ունի: Ամեն քայլափոխի ուղևորը կը հանդիպի շատուհն պատմութեան անշամ շատ հին վիպական թիւններուն: Ժայռերու վրայ նկարներ, սեպագրութիւններ, քարայրերու, գոնուած ժայռերու վրայ և մասամբ այժմ գեւ ընդհանուած իրենց հնադոյն չէնքով, սակայն մշուշապատ նախադարերը հասնող, նախապատմական գերեզմաններ, կուրգաններ, կարմրադեղով ներկուած արկղաձև քարերով դամբարաններ, բազմաթիւ աւերակներ աշխարհիկ և կրօնական չէնքերու, յաճախ հսկայական տարածութեամբ և պիլիւններ, հին ջրաբաշխական շինութիւններ, ընդարձակ երկրի վրայ ցրուած են և կը թոյլատրեն իրարմէ զանազանել բազմաթիւ մշակոյթի շերտեր: Այս յիշատակարաններու միջոցաւ կարելի է հետեւել հայկական բարձրաւանդակի բազմափոփոխ պատմութեան մինչև նախապատմական ժամանակները: Այստեղ շատ անգամ արեւելեան, հարաւային և հիւսիսային ազդեցութիւններ իրարու բաղխած են և գերազրդիւ պայքար մղած առաջնութեան իրաւունքի համար: Հոս տեղի ունեցած են պատերազմներ Ասիոյ վրայ գերիշխանութիւն ունենալու համար, ասորեստանցիներու և մեդայիներու և ապա մեդերու և պարսիկներու միջև: Այս երկիրներէն արեմուտք առաջացած են Դարեհն ու Քսերքսէսը: Ալեքսանդր Մեծ իր Հընդկաստան արշաւանքի ատեն հայկական հողերէ անցած է, տասը հազարանոց բանակը Քսենոֆոնի առաջնորդութեամբ անցաւ Հայաստանի մէկ մասի ընդմէջէն: Մինչև հոս հասաւ Հոմի ազգեցութիւնը և մինչև հոս թափանցելին գէպի Արեւելք խաչակիրները: Այս գոներէն անցան մոնղոլներն ու թաթարները: Դարեր պայքար կը մղուէր մահմեդական երկու թշնամի բանակներու՝ չիլիներու և սիւններու միջև: Կրօնական հողի վրայ իրարու բաղխեցան հոս, քաղաքականապէս Ռուսաստան, Պարսկաստան և Թուրքիա խիստ մրցման մէջ էին: Բայց այժմ այս շրջաններու ապագան կը պատկանի անտարակոյս ռուսական զօրաւոր կրկնարժիւ գրօշին՝ ալ ոչ ոք կրնայ անոր յաղթարշաւին արգելք լինել, հան-

դէպ Պարսկաստանի և Թուրքիոյ այս բանը կը նշանակէ մշակոյթ-
 թի յազմութիւն ըզգէմ բարբարոսութեան. յազմութիւն մը կեն-
 սադօր դեռ չմաշած ցեղի մը, հանդէպ ազգերու, որոց ժամանակը
 սնցած է և ամեն նշան կը յուցնեն անկումի: Այս երկար բազ-
 մափոփոխ պատմութեան ընթացքին ամենէն տոկունը խաղկա-
 կանն եղաւ: Զրաբաշխական համարեա բոլոր շինութիւնները այս
 երկրին գոնէ իրենց սկզբնական շինութեանց մէջ հին խաղկա-
 կան ծագում ունին: Իր փայլուն շրջանը կիյնայ նախաքրիստո-
 նէական տասներորդ դարու մէջ:

Անին, հին հայ թագաւորական քաղաքը դեռ տասներկուե-
 րորդ դարէն աւերակներու դաշտմէ նկարէն հեռապատկերով: Մեծ
 Մասիսը, Առաջաւոր Ասիոյ բոլոր Ժողովուրդներու լեռը, էջմիա-
 ծինը 1441-էն կաթողիկոսին վերջնական նիստը և ազով հայ
 ազգային եկեղեցիի հոգեւոր կեդրոնը և Գէօղչա լճի զրաւիչ ափը,
 Սեանայ վանքի կղզիով, այս բոլոր անունները այսօր մեզի ին-
 չե՞ր չեն բեր: Շատ հեռու պիտ երթար, եթէ ուզէինք տալ տպա-
 ւորութիւնները մեր այս հայկական ճամպորդութեան. բայց և
 այնպէս քանի մը, եթէ նոյնիսկ հարեանցի ակնարկներ հայկա-
 կան դաւառներու և արեւելեան Ժողովրդական կեանքի վրայ ընդ-
 հանուր հետաքրքրութիւն պիտ առաջացնեն, մանաւանդ այժմ,
 երբ թուրքական իշխանութեան անկման պատճառով հայկական
 հարցը վերջերս այժմէական եղած է: Բոլոր այս պարագաները
 միասին կ'ազդեն Հայաստան աշխարհը հետաքրքիր և անկալի
 դարձնել տալու:

Օգոստոս 28-ին գիշերուան զնացքով կը մեկնինք Թիֆլիսէն,
 հեղձուցիչ և սաք գիշեր մ'է, առտուն կանուխ մեզ շրջապատուած
 կը տեսնինք լեռներով և թարմ օդը կը խուժէ վազոններու մէջ.
 կը գտնուինք նեղ զարձգարձիկ կիրճի մը մէջ, որու լանջերը
 ծածկուած են անտառներով և թուփերով: Սաղարթներու գունա-
 փոխութեան սկսիլը տեղաւել դգալի կ'ընէ արդէն մերձեցող աշունը,

ձորի ապառաժուտ կողերը, ուղղաձիգ վար կ'իջնէին դէպի փոքր, բայց առատ, պղտոր կանաչ ջուր հոսեցնող Դերեթա-չայ վայրաց առուակը: Փայտերու քիւերուն վրայ կը դանուին մեծազանդուածօրէն ծոպաւոր մեխակներու մեծ մեծ ծոպերը և կը ցուցադրեն իրենց վառ կարմիր ծաղկաշքեղութիւնը: Դարաւանդաւոր յաճախ աւերակներով պսակուած բարձր հարթաւայրերու քով կը բարձրանան վայրաց ժանկոր ժայռի ողնայարներ և շարունակ կողմանցիկ կը մանեն առանձնացած համարեա անրնակ անտառային հովիտներու մէջ: Այսպէս չէինք երեւիայի դէպի Հայաստան անցքը: Այս ուղեգնացութիւնը կը յիշեցնէ մասամբ զուիցերական Ժիւրայի երկաթուղին Բաղէլէն Թիւ կամ Շվարց Վալտի մաս մը, բայց ինքնատիպ վայրերն իրարմէն զանազանութիւնը աւելի մեծ է: Կական տարրերութիւն մ'է, սակայն տիրապետող հրաբխային քարքարուտի սրալիտութիւնը: Վառ կարմիր խայտալուծեր (սորֆիւր), կանաչ և սև ժայռալոյտեր աչքի կը զարնեն իրենց չրջադառի մէջ անսովոր տալաւորութեամբ: Սանահինի մօտ ֆրանսական ընկերութիւն մը մեծ պղնձահանք մ'ունի:

Սքանչելի շինութեամբ և մատակարարուած երկաթուղագիծը երթալով կը բարձրանայ (454 մ.) Թիֆլիսէն սկսած մինչև Կուր և Երասխի ջրարաշխը: Երեք չողեկառք, երկուքը քաջօր մէկը քաջօր, որոց մէկը ապահովաբար մեր ընկերութեան համար էր, որ երկու խոշոր մասնաւոր վազոն ունէր, զնացքը զանգաղօրէն դէպի վեր կը տանին: Ջաջուտի մօտ վերջապէս 1840 մեթր բարձրակէտին կը հասնի: Միայն համեմատութեան համար յիշենք, թէ Սէն Գօթարդ երկաթուղագծի կառուրը, ծովէն 115 մեթր է: Շատ բան մեզի կը յիշեցնէ կեղբոսնական ալպեան երկաթուղին: Պակաս չեն նաև մաս մը փապուղի և մեծ ջրարաշխը ծակող փապուղին 6 կիլոմեթր երկարութեամբ, որ ամբողջ Ռուսաստանի մեծագոյնն է:

Համարեա անդգալի կերպով սակայն նախապէս փոփոխութիւն մը կ'ունենայ: Լեռները իրարմէ կը հեռանան և կ'առնեն

կըրտացուած ձեւ: Անտառի տեղ նախ կ'երևան զեռ բաւական խիտ տատասկի փշուտներ, ասոնց հետ կամայ-կամայ կը մեծնայ թխատեսիլ այրուած խոպան դաշտը, տափաստանային ընոյթը երթալով կը շեշտուի. կողմնակի փոքր ձորարերաններու և մասնակի ձորակներու մէջ անտառներու և թփուտներու վերջին կըղզեակները: Ասոնք բաղկացած են կաղնիէ, թմրիէ, դաշտաթմրիէ, հացենիէ, ընկոյզենիէ և եղերուած վայրի որթերէ: Ասոնք ծայրագոյն նախակարապետներն են ծառատեսակներու, զանդազ ընթացքովը ոլոր-մոլոր սողոսկող առուակի մը, ամայի դաշտի մը մէջէն: Կաղամախին և ուռին կ'ընկերանան անոր ափերուն վերայ: Թափառական հովիւներու վրաններ, արմաթիբի ընդարձակ մշակութեան, մեծ նախիրներ, մեռած քայտքի մը հարիւրաւոր կարմիր և սև տապանաքարերով, փոքր և աւելի մեծ կարաւաններ էջերու, ծանր բեռներով, կը յայտնեն մօտաւորութիւնը կարևոր ընակութիւններու: Հակառակ խղճուկ զիւղերուն և նախնական տներուն, որ հոս ու հոն կ'երեւին, մարդ չկայ սակայն յայտնող թէ բարերեր գաւառէ մը կ'անցնինք:

Արդէն հարաւային կողմը մշուշոտ հեռաւորութեան մէջ կը տեսնուի եօթնգաղաթ Արադածը: Արդէն հայկական բարձրաւանդակին վրայ կը գտնուինք: Մեր առաջ ընկած է Շիրակի բարձրահարթը, որու վրայ մէկ ժամուան մէջ երկաթուղին մինչև Ալեքսանդրոպոլ մօտ 300 մեթր կը յաճնայ:

Մեզմ ալեճեութեամբ, քանի մը բարձրութիւններով կարուած, հետզհետէ զէպի հարաւ հակող միաձև լերկ բարձրահարթ մը կը կորսուի բաւական հեռաւորութեան մը վրայ: Միայն քանի մը փոքր հրաբխային բարձրութիւններ կ'ընդհատեն հոս ու հոն միօրինակ տեսարանը: Մեծ աչքի զարնող հակադրութիւններ կը պակսին:

Թերեւս կարելի է մտածել, թէ այսպիսի դաշտավայր մը տարսափելի պիտի լինի. ընդհակառակն իմ վրայ ձգող զօրութիւն մը ցցուց և մնայուն ազդեցութիւն ըրաւ: Երկարաձգուող, հարուստ փոփոխութիւններով ընթացող իրականութեան մէջ նոյ-

ներ մնացող լեռներու ուրուադիծը, միաշափ դեղին-թուխ հիմնա-
դոյնը, որ ամեն ինչի իշխողն է, ծառերու պակասը, կը պայմանա-
ւորեն ֆրիդլէն Ռաուցելի հետ ըսելով, ոճը այս մեզի այնչափ
տարօրինակ երեցող երկրին: Վեհ լուսթիւնը այն հիմնական տը-
րամադրութիւնն է, որ հոս համարեալ յաղթահարող ազդեցու-
թիւն կ'ընէ անցորդի վրայ և կը յառաջանէ ներքին զոհունա-
կութեան բարերար ազդեցութիւն մը: Նոյնն է նաև Արագածի և
Մասիսի համար, որոնք յայտարար նշաններն են ռուսական Հա-
յաստանի: Ժամերով անոնց կողմը կ'ընթանանք և զանոնք միշտ
անփոփոխ կը տեսնինք մեր առաջ օդայուղքի մը նման կարծես
թէ միշտ կը փախչին: Հասկանալի է թէ այսպիսի երկրի մը մէջ
քաղաքակրթութիւնը դանդաղ յառաջանայ: ամեն նորութիւն գըր-
սէն պիտի դայ և զօտարութեամբ մուտք գործէ, որ հոս աղ-
բող բնակիչները դարեւր ու դարեւր, իրենց բնակավայրերը, կեն-
ցաղը, սովորութիւնները համարեալ անփոփոխ պիտի պահեն:

Որչափ միօրինակ յերեկը, նոյնչափ հրաշալի երեկոն, միայն
արագահաս վերջալոյսով: Կարծես թէ վրան հեղուկ սփի թափ-
ւած, կ'երեւայ այնուհետև Մասիսը: Անհամար ճառագայթախուր-
ձեր կ'արձակէ մայր մանող արեւը, մանիշակագոյն եզերուած ամ-
պաշարքի մը ետեւէն: Երասխի վրայ կը սահի մշուշը կառակող
խաղերով: Թռչուններու երամներ կը քաջուին իրենց գիշերային
բնակարանները: Գրաւիչ, կարմիր վառ գոյները որոյ մէջ եր-
կիրն իրապէս կը լողայ, հետզհետէ աւելի կը մթնին և կ'առնեն
կամայ-կամայ շառագոյն մանիշակագոյն դունաւորում և ապա
կ'անհետանան դանդաղօրէն: Սա այն պահն է երբ մուէլինը գիւ
երկարող ձայնով հաւատացեալները աղօթքի կը հրաւիրէ: Գու-
նազեղ Արեւելքի մասնիկ մը իր խորհրդաւոր թովչութեամբ կ'անց-
ընի մեր առջեւ: Այսպիսի արամադրութիւններէ անտարակոյս
առաջացած են հազար ու մէկ գիշերներու գեղեցիկ հեքիաթնե-
րը:

Կէս օրէ քիչ մը վերջը մեր զնայքը կը հասնի Անիի կայա-
րանը, հասարակածային արեւի այրուցքի մէջ: Մեր երկու պատ-

չաճօրէն յարդարուած երկաթուղիի վազոնները, որ մեզի համար օրեր իբրեւ բնակարան ծառայեցին, բաժնեցին զնացքէն և ցրուեցին կողմնակի երկաթագծերու վրայ: Արդէն Ալեքսանդրոպոլի մէջ վերին պաշտօնեայ մը պարօն Պիէր դը Սալոմոն ներկայացաւ և յայտնեց՝ ներկայանալով իբրեւ առաջին պետական պաշտօնեայ, թէ յանձնարարութիւն ունի Երեւանի նահանգապետի կողմէ մեզի ընկերանալու և ամեն կերպ օգտակար լինելու: Նոյն պաշտօնով մեզի բաժին ընկաւ Մասիսի ուղեւորութեան ատեն պ. Պրիբիլսկի: Ասով մեր այս ճանապարհորդութեան ատեն Հայաստանի մէջ տեղական պաշտօնեաներու մօտ լաւագոյն ընդունելութիւն գտանք: Եւ ընդունելութեան շնորհիւ տիրող պաշտօնէութեան մօտ ժամանակ խլող շատ մը դժուարութիւններէ ազատեցանք: Ասոր շնորհիւ էր, որ մեր հայկական ճանապարհորդութեան ծրագիրը ամբողջութեամբ կատարել կարողացանք:

Ըստ երեւոյթին Անիի կայարանի շէնքերն ու կառատունները անապատի մէջ կը գտնուէին: Բայց անապատ չէ, այլ հնձուած արտերու խողաններ. այժմ արեւէն այրուած ու չորցած հունձքը արդէն կատարուած և հեռաւոր գիւղեր փոխադրուած: Արեւելեան կողմը կը բարձրանան ըլրաշարքեր հին լաւայի հոսանքներէ, որոց կ'այցելենք երեկոյեան: Հիացող աչքերուն հարաւի կողմը կ'երևայ Մեծ Մասիսի ձիւնապատ կոնը: Քանի մը ժամ տևող չրջագայութիւն մը այս ընդարձակ, հեռուէն ըստ երեւոյթին բուսականութենէ զուրկ, ըլրային լաւայէ տարածութիւնը բուսարանին կ'ուտայ անսպասելի հարուստ արդիւնք մը: Ծանրաբեռն կը վերադառնանք և երկար կ'դրաղինք ստացուած հարստութեան զասաւորումով ու զետեղումով. լաւայի ըլուրներու մէջերը խուղարկու կենդանարանը կը գտնէ վաղուց բաղձացուած գիւտ մը, առանձնատեսակ հայկական դայլաշունի մը դանդը, որ մեր մօտ բոլորովին անծանօթ դազան մ'է, ծալտալով կը կոխէ այս կտորը իր ամենապարփակ պարկին մէջ, ճերմակեղէնի, ծխախոտի գինեօգիի շիշերու, կենդանարան, ամեն սրբութեանց կից և կը գոհացնէ իր խուղարկուելի երազները շարժող երջանիկ գիւտ ընողը

յաջորդ գիշեր: Բայց այս գանդը միայն բաւական չէ: Ելենովկայի մէջ կը տեսնենք մեր պաշտօնակիցը, մէկ ձեռքը Անիի մօտ գտած գանդը, մէջը տասը կողեկնոյց դրամ մը, յուսալից հայ պատանիները կը հաւաքէ իր շուրջը, աշխոյժ շարժումներ կ'ընէ և կը ցուցնէ դէպի ամեն կողմ: Լեզուն հասկցան և ինչպէս երբեմն առաքեալները և ապահովարար, ոգևորուած ոչ պակաս առաջին սիրոյ կրակէն, ցրուեցան արագոտն գէպի հեռունները և չողջողուն աչքերով, և ապահով իրենց թաղաւորական վարձատրութեան վերադարձան. շատ մը տասը կողեկնոցներ իրենց աէրերը փոխեցին, և շատ մը հայկական շներու գանդեր գարմանալիօրէն առածիւ պարկին մէջ տեղ գտան, որ ի վերջոյ պայթելու շափ լեշուն էր: Միշտ խոստումնալից բան է, եթէ մարդ կը ճանչնայ երիտասարդները, մանաւանդ կենդանարան մը: Թիֆլիսի մէջ այս գանդերը իրաւացիօրէն հետաքրքրութիւն առաջացուցին, կովկասեան թանգարանի մասնադէտ ընկերակիցներու մօտ: Այս նշանաւոր հաստատութիւնն այսչափ օրինակ չունի: Այսօր այս գանդերը զուլցերական բարձրագոյն արհեստագիտական վարժարանի Կենդանարանական հաւաքածուի մօտը կը կազմեն Յիւրիսի մէջ:

Անիի նշանաւոր աւերակներու մայրաքաղաքը տւելի քան տասը կիլոմետր հեռու կը գտնուի նոյն անուն կայարանէն: Չայն այցելել որոշեցինք յաջորդ օրը: Երեկոյեան ժամի 8-ին կ'երեւայ լուսինը և կը լուսաւորէ պարզուկ ընթրիքը՝ մեր ճանապարհորդական ընկերութեան. թէյ, հաւիթ, ապուխտ և սև հաց կ'առնենք մեզի իրրև սեղան ծառայող բոններու կառատան մէկ եզրին վրայ: Ապա նուիրեցինք ժամ մը զրոյցի և երգի:

Արդէն ժամը չորսին ցերեկի հերթապահութեան պահն է. լուսինը դեռ պայծառ կը լուսաւորէ: Ժամը չորս ու կէսին խողաններու ընդմէջէն կ'երթանք, դէպի աւերակներու քաղաքը, երկու ժամուայ լաւ քաղաքէ մը յետոյ կը հասնինք Անի գիւղը: Իր փեթականման, մասամբ քառանկիւնաձև տանիքներով, քարէ տներով, բակը տուֆէ և լաւայէ քարերով, ցած պատերով չըրջապատուած, ուրախ և նպաստաւոր տպաւորութիւն չընէր, բայց

աշխատասէր ընտելիչները ընդունին ալ արդէն ամբողջապէս կամ-
նելու աշխատութեան մէջ են:

Գիւղէն քիչ անդին միայն կ'երեւայ աւերակ քաղաքը: Սա
այդտեղին դէմ ընկած է, պայտաձե կղզեման ժայռի ելուտի մը
վրայ, որու երեք քառորդը չընկալուած է 30-62 մեթր խո-
րութեամբ փոսով մը: Օձապտոյտ, խորունկ քարէ հունի մը մէջ
կը հոսի Արփաշայը, Նրասիի մէկ վտակը: Պարզուկ, երեք արկղէ
շինուած նաւակով մը մեկ միւս ափը կը տանի նաւակավարը:
Խուռթիւնն ամբողջ այս գրութիւնը իրիւս ամբողջ շինած է: Հա-
պար ու մէկ եկեղեցիներու քաղաքը կ'երեւայ հին ժամանակնե-
րէն մնացած արեւելեան հեքիաթի մը նման: Ան կը յիշուի արդէն
չորրորդ դարէ սկսած: Մինչև 1046 թուականը ան եղած է ար-
քայանիստ քաղաքը Բագրատունեաց սերունդի քաջահերով թա-
գաւորներուն և ապով ալ ծաղկած մայրաքաղաքը Հայաստանի:
Այնուհետև գրաւեցին բիւզանդացիները, 1064-ին սելճուկեան
թուրքերը, ապա քրդական թափառական ցեղեր. 11 և 12-րդ դա-
րուն . . . Ինչևէ՛ր չեն ըսեր այս թուերը: Որչափ նեղու-
թիւն ու տանջանք կրած է այս անկման և համարեա անընդ-
հատ, կազ ու կուռի ժամանակ զժրադր ժողովուրդը, բայց և այն-
պէս տանջանքի պատմութիւնը աղով չի վերջանար: 1239-ին Ա.
նին կը գրաւեն մոնղոլները: 1319-ին քաղաքն ամբողջապէս կը
կործանուի զօրաւոր երկրաշարժէ մը: Ասով իր կործանումը կիյ-
նայ զուիցերական պաշտպանութեան հիմնարկութեան թուին
(1291): Այդ ժամանակէ սկսած, համարեա վեցհարիւր տարի է:
Անին մենակ է, երեսի վրայ ձգուած, չընկալուած հին պատ-
մութեան կախարթմանքով: Ի՞նչպիսի վայր հանգստի, խորհրդա-
ծութեան, հեքիաթներ կարդալու: Ի՞նչ բանաստեղծութիւն կայ
ամենուրեք աւերակոյտերուն վրայ, արդէն ցերեկուան լուսթեան
մէջ, մանաւանդ սաղայն մեղմ լուսնիկայ գլխերը, որ մեր ընկե-
լութեան քանի մը շուտիկ ընտելեան սիրահարներ ապրեցան:
Հին ամբուլեանց դռներէն մէկէն կը մտնենք աւերակներու դաշ-
տը. անհամար առաւել կամ նուազ քայքայուած, կործանուած և-

կեղեցիներ, աշտարակներ և պալատներ մեզ կը փոխադրեն շատոնց անյայտացած ժամանակները:

Այժմ կառավարութեան կողմէ պահպանուած միայնորդները մտամբ աշնչափ լաւ մնացած են, որ կարծես թէ փոխանակ վեց հարիւր տարուան, հազիւ վաթսուէ տարի անցած է կործանումէն: Ասոնք Պետերբուրգի գիտութեանց ակադեմիայի, կաճառի յանձնարարութեամբ կ'առնուին և կ'ուսումնասիրուին: Հին եկեղեցիի մը տաճանին մօտը շինուած տաղաւարներու մէջ կը զըստուրէ թանգարան մը: Թանգարանապետը, լեզուադէտ մը, առաջնորդէ մեր ընկերութիւնը հաւաքածուներու մօտ և լաւ ֆրանսերէնով մը բացատրեց ամենակարեւորները: Բայց և այնպէս ամենաուսումնածարան անգամ փոքր մաս մը միայն կրնայ տեսնել: Փամեր ու օրեր պէտք էին ամեն ինչ տեսնելու: Մեզմէ ո՞վ անգամ մ'ալ բազմ պիտ ունենայ Անին, հին օրերու այս գոհարը տեսնելու:

Մշակոյթի և պատմութեան ամեն յարգանքի հետ մարմինն ալ իր իրաւունքն ունի, հանգստի և անուշիկ: Երկուքն ալ հայաստանի մէջ յաճախ պահեստան: Աւերակներու անկիւն մը բոյն դրած են, առանձնացած զոյգ մը գիւղացի, որոց մօտ թանգարանապետը մենակ բնակէին է: Քանի մը կոպէկով և անուշ լեզուով կարելի է թէյ, հաւկիթ և հաց ստանալ: Հայկական հացը՝ լօշը — լաւաշը, որ բարակ է, կը յիշենք թուխ կտաւը, ան կարծր է և այնքան ալ համով չէ: Բայց անօթի մարդը չնորհակալութեամբ կ'ընդունի ինչ որ իր հայրենիքի մէջ անշուշտ պիտ արհամարէր: Աւերակներու սիրահարներ կը բարձրանան դեռ 20 մեթր բարձրութեան մզկիթի մը աշտարակը, մինարէն:

Վերադարձին Անի գիւղի մէջ գաղար մը ըրինք և լուրորովին հին կտակարանի ձեռով, կամուր, աւելի չիտակ, արմաթըը հասկերէն հանելը գիտեցինք: Ողորկուած կաւէ զեմնին (կալի) վրայ լեշուցած են արմաթի հասկերը, անլիւրջ շուրջը կը զառնան եղիներ, գոմէշներ, էջեր կամ ձիեր անոր վրայ, ինչ որ կայ: Կենդանիները իրենց ետեւէն կը քաշեն տակը երկրներ կամ նոյ-

նիսկ մէջը նստեցուցած քարեր (կայծքար) ունեցող տախտակներ (կամ): Ամբողջ ընտանիքը, հայր, մայր և տղայք, կը քչեն կենդանիները, ճարտարօրէն կանգնելով հաւատարակչիւ կերպով կամերուն վրայ և իրենց ծանրութեամբ դուրս կը հանեն հատիկները: Երբ եղ մը բնական պէտք կ'զգայ և իրրե նախապատրաստութիւն բարեձեւ թափով մը պոչը վեր կը բարձրացնէ, առաջնորդողը (կամնողը) իրարանցում մը կ'ունենայ, արագ կամէն վար կը յատկէ, չափ մը ծղօտ կ'առնէ իր երկու ձեռքերու միացումին վրայ և ճիշտ ժամանակին կը պահէ զայն անասունի յետոյքի տակ: Ամբողջ աղբը ճարտարօրէն կ'առնուի և կալէն գուրս կը նետուի: Մեզի մասնաւորապէս ուրախացուց հին կտակարանի հեռեւեալ խօսքի զործադրութիւնը «կամնող եզի բերանը չպիտի կապես»: Իսկապէս քաշող կենդանին լեցուն բերան մը կ'առնէ և երբեմն երբեմն այսպիսով իր աշխատանքը իրեն հաճելի կը դառնայ: Կէսօրին մամբողջ ընկերութիւնը նորէն հաւաքուած է կայարանը: Ըիշտ այդ պահուն սալ մը ձմերուկ վար կ'առնէին, բռնաւորուած էջերով ուրիշ տեղ փոխադրուելու համար: Ծ-Տ կուպեկով կարելի է խոշոր ձմերուկ մը ստանալ: Շատեր իրենց պապակը յագեցուցին: Չոր, սահաւաճուր հայատտանի մէջ ձմերուկ մը Աստուածային պարգեւ մ'է:

Ժամը երկուքին մօտերը մեր վագոնները կապեցին Թիֆլիսի գնացքին, որ կը շարունակէ իր ճանապարհը մեղմօրէն ցածրող գետնի վրայէն հաճելի ընթացքով մը գէպի Երասխ: Շուտով կը տեսնենք, որ չրջապատուած ենք չափազանց միօրինակ տափաստանային անապատներով: Արմաիքի մշակութիւնը վերջացած է: Անսահման կը տարածուի չոր, հրաբխային, անբերրի յաճախ աղի գետինը, հոս ու հոն կ'երեւին աստանդական քիւրդեր իրենց հօտերով:

Վերին պաշտօնեաներու մեզի հետ լինելու լուրը ինչպէս կ'երևի տարածուեցաւ վաղուց կրակի նման: Արդէն յաջորդ կայարանը եկած էր մեծ պատգամաւորութիւն մը խնդրադիր մը տալու համար: մէկն իրրե խօսող առաջացաւ, խնդիրը բերանա-

ցի ալ ներկայացնելու, երբ միւս անգամները պատգամաւորութեան տկնածանքով գլուխներ բայ կանդնած մնային վաղոնի մօտ:

Կայարանները իրարմէ շատ հեռու կը գտնուին: Շատ անգամ կը հարցուի, թէ առհասարակ ինչո՞ւ կայարանները քանի որ ընդարձակ դաշտի մը վրայ կ'երեւան, յաճախ մէկ մեծ կայարան կողմնակի շէնքերով, պատկան տեղի բնակութեան — ոչ մէկ հետք կայ սովորաբար: Նոյնիսկ Երեւանի մէջ կայարանը քաղաքէն հեռու է կէս ժամէ աւելի: Կայարանին կը պատկանի նաև մեծ կաթնայ մը, որ կը գտնուի յատկապէս իրեն համար չինւած տնակի մը մէջ: Հոս կայարանի վարչութեան կողմէ ձմեռը եռացած ջուր կը պատրաստեն, որ տրամադրելի է ուղեւորներու հեշտաւոններու համար: Այսպիսի թէյի ջրի տնակ մը տեսանք Արաղածի կայարանին մէջ:

Գորշ արանմիսեայ տափաստանը կը ծածկէ երկիրը, ապա կը յաջորդէ խսկական քարէ տնապատ մը մասնակի հլւթկէ բոյսերով և տեղ-տեղ *Zygophyllum faboga* L: Չոր, քարքարուտ կամ կաւոտ գետնի վրայ կը աճեն բաւական տարածութեամբ *Stipa* տափաստաններ: Տիրուր բոյսը *Stipa zjovitjanna* Tran երբեմն նաև *Andropogon Schoenum* L: Հետեւն կ'երեւայ արդէն կանաչ երեզ մը, որու մէջ աչքի կը զարնեն հսկայական շարքը կաղամախներու, հոն Երասխն է որ կը հոսի: Շտապով կը մօտենանք նոր մշակուած հողերու և կապոյտ հորիզոնի վրայ կը բարձրանայ հարաւային կողմը ցցուած մեր ցանկացած նշատակը — հսկայ Մասիսը, թէև ասկէ մեզի շատ հսկայական չերեւնար: Եւ ոչ ոք կ'ուզէ ըմբռնել, թէ ան բարձրաւանդակէն դեռ 4000 մետր բարձր է: Ասոր պատճառը վճիտ, չոր օդն է: Վազոնի պատուհանէն տեսականօրէն արագ կը բարձրանանք և արեւի շողերուն մէջ փայլող կոնի ծածկոյթ սառուցի մէջ կը զարնենք մտածութեան մէջ սառուցի տապաւրը:

Մինչ այս կը հասնինք ամենահրաշալի պտղամշակութեան վայրը: Կայարաններու առաջ շարքով զիւղացիներ կանդնած կ'առաջարկեն չափազանց աթան փառաւոր պտուղներ և համեզ չը-

տեսնուած խաղողը: 20 կոպեկի կարելի է գնել մեծ սակաւմը լե-
ցուն, ամանով միասին: Ամենքն ալ կը վայելեն հաճոյքը այս
գովուած երկրին: Ափսոս որ առաջարկուած հրաշալի գեղձերը,
խնձորի մեծութեամբ և փառաւոր, գեղին, կարմիր և կապոյտ
սալորներ գեռ ամբողջապէս հասուն չէին: Ամենքն ալ, բայց-
առթիւն լինելով խաղողներն ու բազմաթիւ զանազան ձմերուկ-
ները, առաւել կամ նուազ պինդ և գեռ բոլորովին չհասած քաղ-
ւած էին: Յաջորդող գիշերը ամեն մարդ, նոյնիսկ մազը ճերմը-
կած զիտութեան սպասաւորը ցանկութիւն ունեցան աֆիսին:

Երբ երեկոյեան կամարլու հասանք, արեւ հրազնդի նման
մայր կը մտնէր ծիրանեպոյն շուրի մէջ, սքանչելի տեսարան մը:
Մեզի կը գիմաւորէ Մեսրոպ եպիսկոպոսը, հսկայանման մարդ
մը, փառաւոր բնորոշ զլխով և երկար սև եկեղեցական վերար-
կւով՝ գլխուն զրած փոքրիկ մանուշակապոյն զտակը: Եւ ան-
միջապէս տեղի ունեցան նախնական խօսակցութիւնները յառա-
ջիկայ օրերու մէջ Մասիսի գլուխը կատարելիք վերելքի մասին:
Բայց այս բանը առանձին զլուխով մը պիտի նկարագրենք: Մինչ
այս պիտի խօսենք համառօտ կերպով Հայաստանի բնակիչներու
մասին:

Այս երկրի մէջ կը բնակին երեք բնիկ ժողովուրդներ, հայե-
րը, թաթարները և քիւրդերը: Ասկէ վաս կան նաև քանի մը փոք-
րամասնութիւններ, իրրև ախրող քեզ ուսաները կը բնակին քու-
ղաքներու մէջ: Ասոնցմէ են շատ մը քաղաքային և ղրնւորական
պաշտօնեաները: Կարսն ու Երևանը ունին զօրաւոր պահակա-
զօրք: Բաւական թուով պարսիկներու կը պատահի մարդ հա-
րաւային սահմանային շրջաններու մէջ: Մասնաւորապէս յիշա-
տակութեան աժանի են կարգ մը աղանդաւորներու դաշութներ,
ինչպէս դուխօրուները և մուլապանները: Ասոնք համարեա ա-
ռանց րացառութեան արհեստաւոր, կառապան կամ գիւղացի են,
մեղուաջան, ճարտար, համակրելի մարդիկ, մասամբ նախապէս
գերմանիայէն եկած, բայց յաճախ շատոնց արդէն թողած են ի-
րենց լեզուն: Մեր ճանապարհորդութեան ժամանակ Երևանէն

Սեանայ լճի քովէն կարաքիլիսէ երթալու ատեն անցած ենք ատոնց գեղեցիկ գիւղերէն, որոնք աչքի կը դարնեն իրենց շինութեամբ և լաւ մաքրութեամբ: Տները ծածկուած են ծղօտէ և կղմինարէ տանիքներով: արատսովոր հայրենի և զուարթ տալաւորութիւնը կ'ընեն իրենց հերձակ պատերով և պատուհաններու պարզ վարադուլներով: Սուխոյ-Փոնտանի մէջ կը կարծէինք թէ շուարական գիւղի մը մէջ կը գտնուինք: Արթուն, կլորիկ գեղջիկուհի մը իր խորտակ աւ կապոյտ աչքերով կը հոգար մեզ հերանարարար-աղաւակու ոչ մէկ հետք: Շատ մաքուր սենեակի մէջ ամեն ինչ հայրենական կը թուէր:

Ռուսական կառավարութիւնը բռնութեամբ զետեղեց այս աղանդաւորները թաթարական բնակչութեան մէջ: Ասոնք պէտք է սորվէին այդ ատակ մարդոցմէ, թէ ինչպէս կարելի է շիտակ և նպատաւոր կերպով տնտեսութիւն ընել և գիւղացի լինել: Կառավարութիւնը կը յուսայ այս միջոցով բարեօք և ընդհանուր քաղաքակրթութիւն մը: Հակառակ շատ մը դժուարութեանց այս գիւղերը չնորհէ իրենց բարոյական մաքրութեան և քննասիրութեան, հասան որոշ բարձրութեան: Մուլադանները, կաթ խմողներ են, որ ալքոհոլ չեն զործածեր: Գուխօրութիւնը կը մերժեն որեւէ գինւորական ծառայութիւն և միտ չեն ուտեր: Արմատական մաս մ'ալ, այնչափ հեռու կ'երթայ, որ կ'ուզէ մարդկային սերունդի անուամբ դադրեցնել: Հակառակ այս տարօրինակութեանց իրնէ պարզաբնոյթ մարդիկ են: Քիչ մը աւելի իրաւունքով և շարժման ազատութեամբ այս բնակչութիւնները շուտով կրնային ծաղկած համայնքներ լինել: Կառավարութիւնը ասոնցմէ աւելի ճարտար և հաւատարիմ հպատակ ալ չէր կրնար գտնել:

Թաթարներն ու քիւրդերը մահմետական են, որ իրենց հօտերով միշտ թափառական կեանք մը կը վարեն և դժուարութեամբ կը վարժուին կանոնաւոր կեանքի: Թաթարները մոնղոլական ծագում ունեն և մասամբ ընտարմացած աշխարհ մ'են, առանց բան մը ստեղծելու կարողութեան: Քիւրդերը լեզուով կը պատկանին ժողովուրդներու հնդեւրոպական խումբի իրանական

ծիւղին: Բայց սխալ ճամպու վրայ են անցած, աւաղակներու ժողովուրդ մը, որու համար կոխն ու հողկահարութիւնը պէտք մը դարձած է: Նոյնիսկ ռուսական գերիշխանութեան տակ գտնուող ցեղերը պահած են իրենց անսանձ, ամեն իրաւական օրէնք հեղնող սովորութիւնները: Մենք ալ Մասիս լիւր բարձրացած ժամանակ փորձառութիւն ունեցանք, որոնք կը հաստատեն ընդհանուր գնահատութեան դատողութիւնը:

Թուով առաջին տեղը կը զբաւեն սակայն հայերը՝ արմենները: Ասոնք ամենանստակեաց մասն են ընակչութեան: Քաղաքներու մէջ գործունեայ, առևտրական, զբաղէտ, սեղանաւոր (բանքիւր), բժիշկ և արհեստաւոր են. բայց մեծամասնութիւնը կ'ըզբաղի հողագործութեամբ: Շատ դարմացանք Հայաստանի մէջ տեսնելով այսչափ հիմնաւոր և ընդարձակ մշակութիւն արմտիքի: Մեր այցելութեան տակն, սակայն հունձերը մեծ մասամբ ներս առնուած էր: Մեծատարած խոզանները գերազանց վիպութիւն մ'են խնամեալ երկրագործութեան: Շատ մը հողային տարածութիւններ դեռ կորդ և անմշակ են: Բայց կ'աշխատեն ջրարաշխական շինութիւններով նորանոր տարածութիւններ մշակելի դարձնել: Գնահատելու արժանի է Էջմիածնի վանական վարչութեան ձեռնարկու ոգին: Մեծ ծախսերով այժմ կը շինուի 22 կմ. երկարութեամբ ջրանցք մը, որ Սեանայ լճէն բղխող, Զանգու՝ Հրազդան գետի ջուրը Երևանէն սկսած պիտի տանի մինչև այժմ անբերր բարձր տափաստանային տարածութիւնները: Ալիպախով հարուստ տափաստանային հողերը անմիջապէս, որ կարևոր ջուրն ունենան կը դառնան արտասովոր արգասաւոր: Հնագոյն քաղաքակիրթ պետութիւնները Միջագետքի և Եգիպտոսի մէջ այսպիսի հողերու մէջ առաջացած են:

Այս բանը կառուցած է նաև Երասխի ափի երկարութեան վրայ գտնուած հողերը, կաղամախները կը ծառայեն իրրի պաշտպանող վարապոյր (rida x protecteur), մշակուած հողի ընդդէմ ուժգին և չորացած տափաստանային քամիներուն: Ծովու մակերևոյթէն 800 — 1000 մեթր բարձրութեան վրայ կը մը-

չափէն բամբակ և բրինձ չափազանց մեծ չափով: Մասնաւորապէս լաւ կը յաջողի որթատունկը: Փայտի պակասութեան պատճառաւ որթի ճիւղերը կը թողնեն, որ անկանոն կերպով աճին դեանի վրայ: Երեանի շուրջը կ'ըսեն թէ 104 տեսակ խաղող կայ: Կամարլուի մէջ ուղածներու չափ ճաշակեցինք զսվացնող խաղողը հայ կալուածատիրոջ մը: Ամենաբազմապատն տեսակները բազմազոյն խառնուրդով կ'աճին խառնիխուռն, կարմիր, կապոյտ, դեղին և կանաչ պտուղներով: Բոլորովին մանրահատ, նաև խոշոր հատերով, համարեա փոքր սալորի մեծութեամբ: Մաս մը հնձանի համար կը գործածեն, ուրիշներ չամիչ պատրաստելու, կամ պահածոյի սահմանուած են, ուրիշներ կը ծառայեն իրրև սեղանի պառուղ և կ'ուտուին բունի վրայէն կամ ձմեռուան համար կը պահուին, բայց բոլորն ալ հրաշալի համ ունին և շատ չաքար: Ինչպէս ամբողջ Ռուսաստանի, այնպէս ալ Հոյստանի մէջ արեւածաղիկները իւր պարունակող սերմերուն համար շատ սիրւած են իրրև համեղ ազանդեր և կը մշակեն արտերով:

Մեծ դմակաւոր ոչխարներու հօտերուն, փոքր տակուն տափաստանային եղջիւրաւոր անասուններու և ուղտերու քով, որ երկրի զլխաւոր բեռնակիր և փոխադրող կենդանիներն են՝ կը տեսնուին աղի ճահիճներու մէջ զգալաւորապէս արագիւններ: Տընկւած պտղատու ծառերու շուրջը կը թռչկոտեն վարանոտ բազմաթիւ կապոյտ սերմնադուռներ, փառաւոր ծիրանի լալուարթ և զմրուխտագոյն փետուրներով և յաճախ սեւեղր թևերով:

Երասխի տենդոտ, կանգնած ջրերու մէջ կը զանուին ճիւղ և եղեգ. գոմէշը, ութեղ կենդանի մը, իրարմէ հեռացող եղջիւրներով և չափազանց բթամիտ արտայայտութեամբ մեծ խումբերով կը լողայ գետի մէջ և կեղտոտ ջրէն կ'ելլէ աղմոտ, իսկ ան խորհուրդանշան մ'է կոշտութեան և տղկոլութեան:

Մշակուած երկիրը, կարծես եղբւրւած է բոլորովին լերկ, կարմրուկ հրաբխային լեռներով կամ աղային տափաստաններով իրենց ճերմակ բորբոսներով:

Ընդարձակ տարածութիւններ վայրի մոշայի թփուտներով,

մանուշակագոյն ծաղկաւոր ստատիկէի տեսակներով՝ որթատունկերով և հիւթեղ հալոֆիտներով լայնօրէն ծածկուած, որոնք կը պատկանին բոյսերու տարրեր տեսակներու և ընտանիքներու, ըստ յայտնուած բուսարանի աչքն անգամ զփութարութեամբ կրնայ պահպանել իրարմէ, տարրեր տեսակները:

Բոլորովին առանձնայատուկ է հայ գիւղացիի տունը. յաճախ կը տեսնուին անդադը, հազիւ երեք մէթր բարձրութեամբ քարէ շինութիւններ, դռան քով կը գտնուին միայն քանի մը փոքր վանդակապատ լուսամուտ: Զարդարանք բոլորովին չկայ, տանիքը բոլորովին տափակ է: Այս բնակութիւնները մենատարած են: Քիչ մը հեռուէն աւելի քարակոյտերու կը նմանին քան բնակութեան: Ետտ տարօրինակ կ'երևան տանիքներու վրայ բարդւած խոտի դեղերը, որոնք կը զործածուին մասամբ իրրե սնունդ տնտեսներու, մասամբ ալ իրրե վառելիք: Ախարն ալ աղիւսածէ, չորցուցած ախոռներու, գոմերու աղրը, իրրե վառելիք կը գործածեն:

Մասիսի չուրջը չոր տարածութեան վրայ գիւղերը շինուած են, հիւսիսային Սահարայի բնակութեանց նման կաւէ: Մէն մի կալուած շրջապատուած է մարդահասակ կաւէ պատով մը:

Այս կաւէ շինութեանց տանիքներու վրայ կ'երևան բարձր վայտէ մոյթեր, ասոնք չափազանց հասարակ մահճակալներ են: Այս տանիքներու վրայ ամառը կը քնանան, հոս աւելի դով է քան վաղ, նեղ տարածութիւնը, արեւն տաքացած գետնի վրայ: Այս եղանակին անձրեւէ բնաւ վախ չունին: Ասկէ դատ կ'ըսեն թէ տենդի վտանգը հոս աւելի նուազ է, քանի որ հիւանդութիւն տարածող մօզուկները այդչափ բարձր չեն թռչիր:

Հայ ժողովուրդը, որուն վիճակուած է երկրի այսչափ կեդրոնական վայրը իրրե հայրենիք, զօրաւոր և բազմաթիւ եղած չէ մեծ իշխանութիւն մը ունենալու և պահպանելու համար, թէև երբեմն ունեցած է իր մեծ պատմական դարը, ըստ այս միայն կարճ ժամանակով. պատերազմական յատկութիւններ մեծ մա-

սամբ կը պահառին: Բայց չափազանց աչքի դարնող է որ այս բոլոր փոթորիկներէն, որ իր հայրենիքի վերայն անյեր են և բոլոր ժողովուրդները նոյն երկրի վրայ պայքարած են, ինքը վերապրած է: Անհաւատալի տոկոսնութեամբ հաւատարիմ մնացած է իր հողին: Հազիւ թէ ուրիշ ժողովուրդ մը դոնուի, որ հազարամեակներու ընթացքին այսքան ողբերգական ճակատագիր ունեցած լինի, այսքան սոսկալի արիւնոտ ճնշում և ստրկութիւն հանդուրժած լինի որչափ հայը, և այս ամենը մեծ մասամբ ժողովուրդներու միջոցով, որ հոգեմտաւոր և մարմնական տեսակէտով իրմէ ցածր դասուած են:

Շատ մը հայեր, թէ և երկրէն հեռացած են, բայց հակառակ այս ցրուածութեան հայրենիքի հետ մեծ մասամբ սերտ և հաստատուն կապուած են: Հոն է ոչ միայն իրենց ազգայնական, այլև իրենց մտաւոր և կրօնական կեդրոնը: Այս հնոցը՝ էջմիածնի հայրապետութիւնը դեռ այսօր ալ իր ազգակիրցներու գերիշխող մեծամասնութեան վրայ ունի համարեա մոգական ազդեցութիւն: Վեց հարիւր տարիէ աւելի է, որ հայ ժողովուրդը ցրուած է: Ո՛րչափ անգամ, այս ժամանակ իր հայրենիքը փոխած է իր քաղաքական իշխանութիւնը: Ո՛րչափ անգամ հայրապետութիւնը ստրկացած է ու անարդուած, բայց և այնպէս, այն կապը, որ ամենահեռուներն անգամ կը միացնէ հայրենիքի հետ, չէ լուծւած: Հայերը հաստատ հաւատարմութիւն ունեն իրենց հայրենիքին, իրենց լեզուին ու գրականութեան, իրենց սովորութեանց, քրիստոնէական և իրենց սեփական եկեղեցական ու ազգային կազմակերպութեան: Այս բանն ամենաանաչառ և իրաւը մտածող մարդ անոնց համար պէտք է ճանչնայ: Հակառակ ասոր բոլորովին միակողմանի նախապաշարում ունին արեւմտեան եւրոպայի մէջ հայերու հանդէպ: Սնոր կը վերադրեն ընչաքաղցութիւն, խորամանկութիւն, անյապօրութիւն: Բայց արդար լինինք. ինչպէս պէտք է կազմուի ազատ միտք մը, պարզ նկարագիր մը, երբ դարեր շարունակ ամենազղուելի ստորացուցիչ կողոպտւածութիւն տեսութեան մէջ կ'ապրի, երբ շարունակ ջարդի ճնշումին տակ է,

երբ կայքն ու գոյքը մշտական վտանգի տակ կը գտնուէի։ Այս նախապաշարումին մէջ կը գտնուէր թերեւ չար խղճի մասնիկ մը, որ մենք արեւմտեան Եւրոպայի մէջ այս ժողովուրդին յաճախ յայտուէինք ազատութեան իր թշնամիներէն և ամեն անգամ վրձնական ժամին երեսի վրայ ձգեցինք։

Եւ արեւելքիներու ատելութիւնը հայերու հանդէպ գլխաւորապէս հիմնուած չէ՞ սեփական տկարութեան զգացումին վրայ։ Նախանձի մէջ, այն գիտակցութեան մէջ, թէ շարժուն մտքով, բարձր ընդունակութեամբ նախաձեռնառէր հայը իրենցմէ շատ բարձր է։

Իրականութիւն է, որ առաջաւոր Ասիոյ ամբողջ բնիկ ժողովուրդներու խառնուրդին մէջ հայերը մեծակ քաղաքակիրթ ժողովուրդն են, որ ընդունակ են քաղաքական նպաստաւոր պայմաններու մէջ երկիրը որոշ բարգաւաճումի, կանոնաւոր իրաւակարգի և բարեկեցիկ վիճակի հասցնելու։

Ընտանեկան կեանքն օրինակելի է, անոր մէջ կ'արտացոլայ լուսավորչի նահապետական յարաբերութիւնը ժողովուրդի անդամներու մէջ իրարու հանդէպ։ Ոչ մէկ այլ ժողովուրդի մէջ ընտանեկան կապը աւելի սերտ և մտերմիկ է։ Ասիական ժողովուրդներէն միայն հայոց մէջ է կանայի սեռն աւելի դնահատուած և յարգալից գիրք ունի ընտանիքի մէջ։ Ինչպէս նաև ասպնջակահովեան սրբութիւնը ծայրայեղ և չափազանց զոհարերութեամբ։ Ուսման սէրը իսկապէս որ սքանչելի է։ Հայ բարձր հոգևորականներէն շատեր իրենց ուսման մէկ մասը Գերմանիոյ և Զուլթերիոյ մէջ առած են և աշակերտներ են Գերման համալսարաններու առաջնակարգ աստուածաբաններուն։ Առողջ յառաջագիմութեան ոգին տարածուած է ընդհանրապէս։ Բան մը կատարելու յարատեւութիւնը և կամքը ու իր ազդութիւնը պահելը արժանի է ամեն գովասանքի։ Ո՛րչափ զիրար կը պահեն, որչափ մեծ է իրենց զոհարերութեան ոգին, մանաւանդ իրենց ցեղակիցներու հանդէպ։

Ուր որ հայու պատահեցանք, տեսանք այս բոլոր գեղեցիկ

յարկութիւնները: Անոնց հետ յարաբերութեան մէջ եղանք ան-
րոնադրօսիկ կերպով, փոխադարձ յարգանքի և կատարեալ հաւա-
սարութեան պայմանով, բոլորովին հակառակ թաթարներու,
քիւրդերու և ուրիշ բնիկ ժողովուրդներու: Խօսքը միայն սու-
սական Հայաստանի մասին է: Որչափ հրաշալի կերպով զարգա-
ցած է ան, երկրի Ռուսաստանին միացնելէն յետոյ: Ո՛րչափ յա-
ռաջդիմութիւն եղած է համեմատելով թուրքական և պարսկա-
կան Հայաստանի հետ: Բայց և այնպէս համեմատելով մեր արե-
մասեան չափանիշին հետ, փայլուն է, պակաս է վիճակը:

Հայաստանի պատմութիւնն ալ շատ մը ընդհանուր հետա-
քրքրութեան արժանի դժեր կը ցուշնէ: Հայաստանն այն երկիրն
է, որ արդէն երրորդ դարու մէջ իբրեւ առաջինը քրիստոնէս-
թիւնը յայտարարած է իբրեւ պետական կրօն: Հին ժամանակ ա-
նոր կազմը շատ թույլ միութեամբ աւատական պետութիւն մ'էր,
համեմատ իր տեղադրական կազմութեան, երկիրը բաժնուած էր
շատ մը մեծ ու փոքր զաւառներու: Այս պայմաններուն նայելով
կարելի է պարզաբանել բազմապիսի առանձին ձգտումները և ա-
սով ալ հայկական պետութեան քաղաքական տկարութիւնը: Թէ և
յաճախ հասած է բարզաւաճ վիճակի, բայց այս բարեկեցութիւ-
նը միշտ համեմատաբար կարճ տևողութիւն ունեցած է: Հայօջ
վերջին թագաւորը՝ Լեոն Զ. մեռած է 1291-ին: Այնուհետեւ ալ
անկախ Հայաստան եղած չէ:

Կաթողիկոսի արժանիքը, ըստ Հ. Գեղեցիկի ամենէն աւելի հրէ-
ական քաջանայապետութեան հետ կարելի է համեմատել: Աւելի
հզօր քան հայ թագաւորութիւնը եղաւ. դեռ այսօր ալ անոր մէջ
կ'արտայայտուի հայ ազգային միութիւնը: Արդէն 491-ին տեղի
ունեցաւ հայ եկեղեցիի բաժանումը միւսներէն: Բոլոր միւս պա-
ւանանքներէն հայ պաշտամունքը կը տարրերի Քրիստոսի անձին
միաբնոյթ ըմբռնողութեամբ: Ան Քրիստոսի մէջ կը տեսնէ մէկ
միաշեալ բնութիւն, միւս եկեղեցիները իբրեւ վարդապետական
բանաձև կ'ընդունին անոր մէջ երկու բնութիւնները՝ աստուա-
ծայինն ու մարդկայինը ըստ իրենց էութեան անխառն մնայած են:

Երբ 19-րդ դարուն նշանաւորագոյն հայրապետ Ներսէսին (Աշտարակեցի) 1841-ին, իր Պետերբուրգ այցելութեան աւթիւ, որ ամեն հայրապետ ցարին պիտ ընէ, իր պաշտօնի հաստատութեան համար, հարց տուաւ ազատատէր Աւգուստ Թոն Հաքահաւուզըն, թէ ի՞նչ է հայ հայրապետի յարաբերութիւնը Պապին հետ: Կաթողիկոսն անմիջապէս կը պատասխանէ, «Պապը առաջին հայրապետն է քրիստոնէութեան և աստիճանով ամենարարձրն է և նախագահը տիեզերական ժողովներուն: Միայն բոլոր իսկական հայրապետները իրարու հաւասար են, իսկական հայրապետներն են միայն Հռոմի, Անտիոքի, Ալեքսանդրիոյ հայրապետները և Էջմիածնի կաթողիկոսը: Երուսաղէմի և Կ. Պոլսոյ պատրեարքները, սակայն միայն տիտղոս ունին, բայց ոչ զիրքն ու իրաւասութիւնները պատրեարքներու, այնչափ, որչափ Լիւսարոնի և Վենետիկները: Հայ տիտղոսաւոր պատրեարքները կարելի է վար առնել կաթողիկոսի և ժողովուրդի կողմէ, բայց կաթողիկոսը, որ օծում ունի, երբեք: Հայ եկեղեցին ամենէն ներողամիտն է: Նա կը ճանչնայ բոլոր մկրտուածները քրիստոնեայ և կ'ուտայ, եթէ ցանկութիւն կայ, եկեղեցիի օրհնութիւնները և կը կատարէ խորհուրդները, առանց պահանջելու, որ ենթական հայ եկեղեցիի միութեան մէջ գտնուի, կամ անոր մէջ մտնի»:

Բազրատունիներու հզօր իշխանութեան ժամանակ կաթողիկոսի նիստը, ինչպէս յիշեցինք, Անին էր: 1441-է սկսած Էջմիածինը Հայաստանի հոգեմտաւոր կեդրոնն է: Այս զիրքն աւելի զօրացած է, հիմնելով հոգեւորականներու դպրոց մը (ակադեմիա) ճեմարանը երկրի բարձրագոյն կրթավայրը և հոն ժողով ունեցող սինոդով: Հայաստանը ունի, սակայն իր սեփական լեզուն ու գիրը, ինչպէս նաև շատ ուշադրութեան արժանի, գրականութիւն և արուեստ մը, վերջինը մասնաւորապէս կը տարածուի ճարտարապետական մարդի վրայ:

Այսպէս բազմապիսի իրաւացի պատճառներ, կը վերահեծանայնեն հետաքրքրութիւնը այս ուշադրաւիչ ժողովուրդին: Իր ոգորումը, իր ազգային նկարագիրը պահպանելու և երկրի վի-

ճակին պատշաճող քաղաքակրթութիւն մը արժանի է գովութեան: Տարակոյս չկայ թէ Առաջաւոր Ասիոյ հայերը զեռ կարեւոր առաքելութիւն մ'ունին կատարելու, որովհետեւ անոնց վրայ է ամենէն առաջ յոյսը, այս երկար ժամանակ երեսի վրայ ձգուած երկիրները լաւ ապագայի մը առաջնորդելու:

Մինչ այս, մինչ այն արդէն կը մօտենայ Թիֆլիս վերադառնալու ժամանակը: Երեւանը մեզ չի կարող երկար պահել: Բացառապէս հայերէ և թաթարներէ բնակուած քաղաքը շատ բան չի տար: Շքեղ է միայն յունական կաթոլիկ եկեղեցին իր բազմաթիւ աշակերտներով, որու ոսկեզօծ զմայեթները կատարելապէս կը շլացնեն աչքերը: Ռուսական իշխանութեան այս խորհրդանշանը իր բարձրութեամբ կը գերազանցէ բոլոր աները: Ասոր կից է քաղաքային պարտէզը, որ ունի բազմաթիւ հանգստանալու տեղեր և փառաւոր ծառերու տակ ախորժելի գովութիւն: Այսպէս շատ զոհացուցիչ բան չկայ յայտնելու: Փողոցներու սալաշատակները անշուք և միօրինակ են և իրարու կը նմանին, ինչպէս մէկ բան միւսին: Մարդ պէտք է ուղղորդուածի (orientieres) միտք ունենայ ըրածը գիտնալու համար: Պաղաքային վարչութիւնը բոլորովին ալ անմատչելի չէ այժմէական ձգտումներու: Երեւանը ձիաքարչ մ'ունի, բայց սարսափելի են ձիերը, խղճուկ գրաստներ, որ Սպանիոյ մէջ մրցարան կարելի է հանել, վազսններն աղբով ծածկուած են: Մեն մի պաշտօնի վրայ վերակացու մը կայ, յուսանք որ պարկեշտ մարդ մ'է:

Հին ժամանակներէ մնացած ամեն բան ունի զրօշ մը անյետակոչելի կործանումի: Շատ անուանի Սարգսրի պալատը իր զարդաւոր որմանկարներով, երբեմն պարսկական փոխարքայի բնակարանը աւերակներու կոյտ մ'է և աղբով լեցուն: Այցելութենէ կարելի է միայն զգուշացնել: Պատերու վերջին կանգուն մնացորդները մեծ ճեղքուածներ ունին և ամեն վայրկեան անկում մը սպառնալիքի տակ է: Պալատի մէկ մասը արդէն բոլորովին վար առնուած է և անոր տեղ կանգնած է նորաշէն յաջող օդիի կործարանը: Այսպէս կը փոխուին ժամանակները, բայց բազարի

այցելութիւնն ալ մեզ յուսախար թողուց. կը յուսայինք տեսնել գեղեցիկ գորգեր, կաշիէ ապրանքներ, դէնքեր, բայց գտանք չատ համեստ միջայարդի ապրանք: Մեզի յատկացուած ոստիկանը իր պաշտօնի մէջ արտասովոր կարեւորութիւն մը կը ցուշնէր: Նռանդով կ'աշխատէր, որ հարկ եղած յարգալիչ հեռաւորութիւնը պահէն մեզմէ, մեզի ընկերայող, չըջապատող բնիկները: Ախտոս որ անոնց լեզուն չենք հասկնար: Արթուն պատանիներու չաբաճճի աչքերը, բաղխումն ու ծիծաղը բազմութեան՝ մեզի աւելի կը զուարճայնեն, քան ամբողջ բազարի հարստութիւնները:

Ամենքէն լաւ քնացեր է զեռ Գէօք ջամի մզկիթը: Նրբամբարձ մինարէն զարդարուած է բազմադոյն ջնարակուած աղիւսներով: Բակի մէջ կազմկօծեն ցայտաղբիւրները — շատրուանները և խողովակներէն անընդհատ կը վազէ ջուրը: Հազուադէպ տեսարան մը այս չոր երկրի վրայ: Տխուր նոճիները կը չըջապատեն սրբավայրը: Մեր ներկայութեան կարեւորութիւն տուող չկայ: Նռանդով կը կատարեն ծխական լուացումներն ու աղօթքները: Բայց հաւանօրէն հաւաստացեալները չեն մտածեր քայքայումի նշաններ ցոյց տուող շէնքին արժանի կերպարանք մը տալ:

Հրաշալի է ընդհակառակն քաղաքի դիրքը, — ջրով ստեղծուած պտղատու պարտէզներու մէջտեղը, Երեանի գեղեցկագոյնը տեսնել քիչերուն է տրուած: Ծնորհիւ մեր կապերուն հայ բարձր հոգեւորականութեան հետ կը հրաւիրուինք Երեանի եպիսկոպոսի պալատը (Առաջնորդարանը): Ծիծեռնակի բոյնի նման ընկած է առաջակարկառ ժայռի մը վրայ, բարձրօրէն վայրագ կարկաչող Զանգուի՝ Հրազդանի վրայ: Օդասուն, սիւնաղարդ պատշգամի վրայ: Մեր աւնարկը կը սահի խորունկ կիրճի վրայէն, նկարէն բլրային գեղջիկական տանիքներով զբաւուած կանաչ տարածութեան և հեռու տափաստաններու վրայէն, այս չըջանալի մէջ իսկապէս հիւսկէնաղարդ ազդեցութեամբ հրաշալի ուրուաղծով երկու Մասիսները, որ մեզի երբէք աւելի գեղեցիկ և աւելի վեհ երեւած չեն, քան այս հրաշալի վայրէն:

Սեպտեմբերի 4-ը անցուցինք իրրեւ հիւրերը բարձր հոգեւորականութեան, աշխարհածանօթ էջմիածնի վանքին մէջ և ընդունուեցանք հանդիսաւոր ունկնդրութեան նորին Սրբութիւն Գէորգ Ե. կաթողիկոսի կողմէ: Բացառիկ մեծ հաճոյք մ'էր առաջնորդութեամբ Մեսրոպ եպիսկոպոսի և Թաւրիզի արքեպիսկոպոսին, որոց երկուքն ալ զիտէին զերմաներէն լեզուն, այցելել և տեսնել զանազան եկեղեցիներ իրենց հարուստ զանձերով: Փառաւոր եկեղեցական հազուադէպով, զոհարներով, ձեռագիրներով, հսկայական մայր եկեղեցին, թանգարանը, մասենադարանը ընթերցարանը, ճեմարանը, տպարանը, բաղնիքները և պարտէզները: Աւելի համրաւաւոր առաջնորդներ յանկալու պէտք չէինք կարող ունենալ: Ամեն մէկուն համար պարզ էր, որ էջմիածինը հայկական մշակույթի կեդրոնն է, որ տակէ կը մեկնին այն բոլոր նորր թիւերը, որ այնչափ ցրուած հայ ժողովուրդը կը միացնեն և պէտք է յուսալ, որ այս բանը նաև ապագային պիտ ընեն և կարողանան ընել, չուտով այն աստիճանը պէտք է ստանայ, որուն արժանի է այս երկիրներու մէջ իրրեւ կարևոր քաղաքակրթական ազդակ:

Տասը ժամուան ճանապարհորդութիւն մը կառքով, մեզ հասցուց Երևնովիւ, Սեանայ լճին մօտ: Ութը կառքերուն ըծուած էին չորսէն հինգական ձի, բոլորն ալ մէկ կարգով իրարու քով շարուած: Երեանէն սկսած, որ ծովէն 984 մեթր բարձր է, ժամերով բարձրանալով մինչև 2200 մեթր բարձրութեան անցք մը, միշտ հիւսիսային արեւելեան ուղղութեամբ:

Այսպէս 70 կմ. անցնելով հասանք մեր նպատակին, զիչերն սկսած, չափազանց յոգնած, սրտագին ընդունուելով մեր պաշտօնակից ուսուցչապետ Պոմինի կողմէ, Թիֆլիսէն:

Յերեկուայ չըջաղայութիւնը Սեանայ կղզիին շատ արդիւնաւոր և հրահանգիչ էր, չնորհիւ ուսուցչապետ Պոմինի. բուսականութիւնը արդէն այնչափ առաջացած է և ամբողջովին այլուած, որ որոշեցինք յաջորդ օրը երթալ Կարաքիլիսէ—Ալէք սանդրոպոլ—Թիֆլիս երկաթուղաւոր միջոց: Առանց զսպանակի,

րայց խատուտիկ ներկուած ֆուրգոն սայլերով անցանք ութսուն կմ. ձամպան տասնեւկէջ ժամէն: Ըստ սովորութեան մեր կառքերուն կ'ընկերանային քանի մը կողաք, փոքր, աշխոյժ ձիերով: Ժամերով կ'անցնինք հսկայական արմտիքի արտերու մէջէ, ուր այժմ ծովու մակերեսէն մօտ 2000 մետր բարձրութեամբ, հունձքը ներս կ'առնուի: Չուրուխու անցքի վրայէն (2125 մետր) կը հասնինք գեղանիստ Դիլիջան կայարանը և նորէն կը բարձրանանք երկար, նեղ կապանով մը հողմահար բարձրահարթերէ: Գաւառը ցանցաւ բնակութիւն ունի: Երբեմնակի հայ կամ թաթար զիւղ մը կամ բնակութիւն մը աղանդաւորներու գաղթականութեան մը, միշտ շաւ տպաւորութեան տակ լաւ մտքբութեամբ և կանոնաւորութեամբ, ինչպէս նաև սրտտանիք գեղեցիկ տներով, որ այնչափ լաւ են, որչափ շուարական երկրի մէջ: Այս է ամենը:

Հայկական բարձրաւանդակէն հրաժեշտ առնելու ամենայարմար օրն է այսօր: Մշուշի խուրձեր կ'անցնին Սեանայ լճի վրայէն և մեզի կ'ընկերանան պաղ քամիով մը մեր երկար զընայքի մէջ: Առաջին անգամը լինելով երկինքը պզտոր է, ամպերը կ'ացնին անձրեւով յղի, լեռներու երկայնքով, բնակութեանց ծովիսը դէպի գետին կը ճնշուի և դէպի արեմուտք ճամպայ կը ցուցնէ: Ամեն ինչ պաղ է, սեամաղձային: Վերջալոյս է. գիշեր պիտ լինի՝ մութ գիշեր: Լուսին չկայ մեկուսի ուղին լուսաւորող, երբեմնակի շան մը հաջիւնը, լոյսի մը երեւումը միտկ վիաներն են ցուցնող, թէ մեզմէ զատ հոս ուրիշ մարդիկ ալ կ'ապրին: Յարատե արագ ընթացքով խիստ մութը կ'իջնէ: Ձիերու դոփիւնը և միօրինակ հնչիւնը անոնց զանգալիկներուն քընարեր են, րայց հանգստի մասին մտածել կարելի չէ: Բաղխումը կը յաջորդէ բաղխումի, միայն քիչ մը մեղմացած տակը գտնուած սակաւյարդի շնորհիւ և մարմնին բնաւ հանգիստ չի տար: Վատաւարեկ, տանջուած, մէջքը ցաւի կապոյտ բիծերով ամեն անգամի վրայ: Բայց և այնպէս շատ դոճ կը կանգնենք վերջապէս Կարաքիլիսէի կայարանին (1308 մ.) առաջ: Կէս գիշերն արդէն կը

մօտենայ: Այս ամբողջ տնհանդատութիւնը նեղիչ, լարուած ուշադրութիւնը շուտով կը մոռնանք: Մասաւոր շահը սակայն դրամագլուխ մ'է, որմէ զեռ տարիներ պիտի սնանինք: Շուտով նորէն պիտի բնակինք մեր մասնատու վաղոններու մէջ: Հրաշալի գնացք մ'եղաւ: Երազի մէջ կ'երեւայ նորինորոյ կախարդիչ պատկերը սրբազան Մասիսին.— ողջոյն քեզ: Մտքով կ'օրօրուինք, օտար, արեւելեան, լի մտերիմ հրապոյրներով պատկերներու մէջ, որոնք արդէն մեր սեփական եսին մէկ մասնիկն են դարձած: Անի, Արալուխ, Սեանայ լիճ, հայեր, թաթարներ, քիւրդեր, պարսիկներ, ինչեր չեն ըսեր մեզի այս բոլոր անուանները:

ՎԵՐԵԼՔ Ի ՄԱՍԻՍ

Ասիա գտնուած էք արդէն: Ասիա՞, ո՛չ: Հիւսիսային, հարաւային Ամերիկա, Աֆրիկէ, այո՛, և Եւրոպա շատ աեղեր, բայց Ասիա երբեք եղած չեմ և շատ սիրով կը ցանկայի լինել: Ուրեմն կրնաք երթալ ուսուցչապետ Ռիքլիի հետ Կովկաս: Նա Հայաստան ալ կ'ուզէ երթալ և եթէ կարելի է Մասիսը բարձրանալ և այն աստն Ասիա կը գտնուիք:

Եւ ինչպէս ինձի, այնպէս ալ պատահեցաւ յերջին տարիներու մէջ Կովկասեան Երկիրներ ու Ռուսաստան ուսումնասիրական ուղևորութեան շատ մը մասնակցողներուն: Շատերու համար ճանապարհորդութիւն մը միայն Կովկասի մէջ հարկ եղած գոհացուցիչ ձգողական ուժը չէր ունենար, բայց հաւանականը այդ ասթիւ հին ժողովուրդներու կեդրոն Հայաստանը, եթէ հընարէ նոյնիսկ առասպելահիւս Մասիսը հասնելը տիրական էր ամբողջ լեւ բարձրացողներու խմբին միացող բուսարանական արշաւանքի մեծամասնութեան համար: Տիրակէն էր թերեւս նոր համար, որ այս արշաւով իսկական Ասիան եկած է, մինչև թուրք-պարսկական սահմանը: Որովհետեւ, թէ արդէօք Կովկասը գոնէ մասամբ ասիական է արդէն, ասոր մասին ուղևորութեան ատեն յաճախ վէճ եղած է, բայց ոչ անոր պրայ, թէ Հայաստանըն ու Մասիսը ամբողջապէս և իսկապէս Ասիա էին: Ուրեմն զէպի Ասիա:

Տօթ ու ջերմ օր մը երկաթուղիի գնացքը մեզ բերաւ օգոստոս 30-ին Անիէն Կամարլու, ուր մեզ ընդունեն էջմիածնի կաթողիկոսի պատուիրակ Մեսրոպ Կախկոպոսը, հովիւ, բարեկամ կերպարանքը. հայ եկեղեցիի բարձր պաշտօնեային անմիջապէս կատարեալ հետաքրքրութիւն արթնցուց և մեր միտքը գերեց: Նա անձնուիրաբար հոգայած էր Մասիսի վերելքի նա-

խաղաղաստութիւնները և կը յուսար մեղի հետ այս բարձրագագաթը ելնել կարողանալ:

Մեր զիջերային կայան Կամարլուի մէջ, որ մօտ 870 մեթր բարձրութիւն ունի և ոչ հետեւ Երասխի ափէն, տեղի վայրը կը դանուինք, այնպէս որ հոս զգուշութեան համար քինին կառնեն: Ըստ սովորութեան կը բնակէինք երկաթուղիի վագոններու մէջ: Գիշերուան զովութեան պատճառաւ հոն տանելի էր և փարթամ կեանքը արդեւ չէ քնանալու:

Օգոստոսի 31-ին ժամը 5-ին արդէն յերեկապահութեան ժամն է և հինգ ու կէսին, ստքի վրայ, երկաթուղիի գծերու մէջ կ'առնենք առաւօտեան առատ կարմիր թէյը, անհրաժեշտ կրկնփող (րիսկիւի): Ժամը 6-ին պէտք է դանդաղօրէն մօտեցող լինէյկայ կառքերով և ֆայէթոններով, անհաւատալիօրէն երեսի վրայ ձգուած փոխադրական միջոցներով երթալ Երասխի միւս կողմը դանուող Արալըն գիւղը, Մասխի ստորոտը: Ժամը 7-ը անցած էր երբ վերջապէս ամեն ինչ կարգի եկաւ, որովհետեւ անհաւատալի է, թէ որչափ յամառօրէն մարդս կապուած է իր հետ բերած իրերուն և անոնցմէ զատուել չի կարող: Սիրելի բուսաբանները իրենց հետ կ'առնեն բուսամաններ և բուսամամուլներ կարծես թէ հօտի մը համար ձմրան պաշար կը տանեն: Վերջապէս խենթ մը յուսմով մը ճամպայ կ'ելլենք, կէս ոտնաչափ փոշիի մէջէն սայլ ու կառքերը արագ ընթացք մը կ'առնեն և բարձրացող փոշիի ամպերը կեղծանեն առաւօտեան արդ ու զարդի հրապոյրը արագ մը: Միայն Երասխի ընթացքը մեզ կ'ստիպէ, որ կանգ առնենք և այժմ զինուորական կարգապահութեամբ դետանաւակով անցնինք ծանծաղ, հանդարտահոս գետը, որու խորութիւնը 50-էն 120 սանտիմետր է միայն: Երասխի անցած պահուն, դետանաւակով անցքը ժողովուրդին, որ ժամերով պիտ սպասէ, կ'արգելուի պրիստաւի (ոստիկանապետի օգնականի) կողմէ, դմէշներու ամբողջ նախիր մը գիւր հանդարտութեամբ մը քալելով և լողալով կ'անցնի միւս ափը, ինչպէս նաև այստեղէն անցնել ուղիղ մարդոցմէ մաս մը, որոց նոյնիսկ մարմնի վերի

մասը չի թրջուիր: լաւ կը համարեն ոտքով անցնիլ: Զիւնհալի ժամանակ Երասխը խիստ պատկառելի գետ մը պիտի լինիրարձըր և հեղեղատ եղերները կը յուշենն, որ այն ատեն 2 — 2 և կէս մեթր կրնայ բարձրանալ և ողողել չրջակայ հողերը: Հիմա անոր լայնութիւնը մեր Լամատին կրնայ հաւասարիլ: Իր գաղջ ջուրը սակայն պլտոր է և կաւագոյն: Ամեն մէկ կառքի անցքը քառորդ ժամ մը կը տեէ, որով երկու ժամի չափ ժամանակ կ'անշնինք մինչև միւս ատէն նորէն ճամպայ կ'ընկնինք: Բայց մեր նպատակը միշտ մեր աչքի առջին է, ըստ երևոյթին նոյն հեռաւորութեամբ կը տատանի Մասիսը տափարակէն բարձրացող կապոյտ մշուշէն վեր և շատեր մեծ բանի տեղ չեն գներ, իրեւ ծանօթ բլուր, բայց երևոյթը հոս ալ կը խարէ:

Եւ այժմ դէպ առաջ քանի մը կիլոմետր լայնութեամբ տափարակին մէջէն. նախ ճահճոտ վայրերէ, որոյ մէջ սև բաղմաթիւ գոմէշներ ախորժով կը լողան և հաճախ հազիւ միայն դունչերը ջրէն դուրս յցած և ապա ճոխ, մեծ մոտամբ կաւէ պատերու մէջ առնուած արտեր բրնձի, եղիպտացորենի, բամբակի և այլն: Արալըս գիւղը, որու խրճիթները պահուած են ուռիներու, մոշաներու և թթաղգի ծառերու մէջ, հոն է: Լեռան կողմը զանրւած գիւղի ծայրը ուսական զինուորական կայան է, ուր արշաւախումբը կրկին պիտի հաւաքուի: Հաստատուեն պատերով, միայակ զօրանոցի շէնքը քանի մը հարիւր մարդու տեղ ունի: Բակը հաստատուած մարմնամարզի գործիքները կը յուշենն, թէ Ռուսաստանի մէջ ալ մարմնամարզով կ'զբաղին և գիշերային պահակներու համար մինչև 10 մեթր բարձրութեամբ աշտարականման փայտէ կաղմածներ շինած են, որ նոքա գիշերները մօեղներու տենդոտ խայթերէն աւելի լաւ կը պաշտպանուին: Հոս ալ դարձեալ ժամեր կ'անշնին մինչև որ մեր խմրի համար շատոնց ապստղուած զբաստները կը հասնին: Բայց առանց պաշտօնեաներու օժանդակութեան, երբ երբեմն ալ մարակը իր զօրաւոր աղէցցութիւնը կ'ընէ, անկարելի է ստանալ: Գիւղացիները կենդանիներուն պէտք ունեն զաշտային աշխատութեանց համար, և

կ'ուտան ի վերջոյ գծկամութեամբ, յոռեղոյնները:

Մինչև այս բոլորի կարգադրութիւնը, ժամանակ ունինք Մասիսի վերելքի պատմութեամբ զրազելու:

Մասիսը միշտ կը համարուի նոյեան տաղանի իջման վայրը և այս աւանդութեան կը պարտի իր ժողովրդականութիւնը: Բայց չըջապատի երկիրներէն ոչ մէկի մէջ, ան Արարատ կը կոչուի: Հայերը զայն կը կոչեն «Մասիս». մեծը, վեհը, թուրքերն ու թաթարները՝ «Ազրի դաղ», փեւեկուած լեռ, և պարսիկները՝ «Քոհնու». — Եոյի լեռ: Հին գրութեանց մէջ, կը կարդացուի թէ, մինչև տասներորդ դարը Մասիս լեռան վրայ խօսք չի կայ, այլ Այրարատ երկրի մասին: Դոկտ. Ազ. Օսալը այս լեռան մասին ըրած նկարագրութեան մէջ կ'ըսէ. — «Եսայի մարգարէի (Լէ 38) զրուածքի մէջ զրուած է «Լեւոբա վախան Այրարատ երկիրը, ուր Երասիս կը հոսի»: Եւ Aleimus Avidus բանաստեղծը 2-րդ դարուն չի խօսիր տաղանի իջման մասին Արարատ՝ Մասիս լեռան վրայ, այլ Հայաստանի բարձր լեռներու վրայ: Երրայականի մէջ Արարատը՝ Հայաստան նշանակելու համար է և պատահեալ հաւանաբար, որ անճիշդ թարգմանութեան հետեանքով, Արարատ անունը Հայաստանի բարձրագոյն կատարէն անշաւ: Բայց լեռան թողնենք իր լուսապսակը, սակայն ժողովուրդը հաւատարիմ կը մնայ աւանդութեան և անոր համար ան է, և կը մնայ անհասանելի «սրբազան լեռը». — գաղտնի: Դեռ հիմայ ալ չըջապատի համար անյաղթելի է: Յաճախակի լեռը բարձրացած լինելու պատմութեամբներու հաւատք չընծայուիր:

Դորբատի ուսուցչապետ Գր. Պարրոտ յաջողեցաւ 1829-ի սեպ. 27-ին զանազան զուր փորձերէ յետոյ առաջին անգամ արեւելեան կողմէն իր սաքը զննել այս նշանաւոր դաղաթին վրայ: Անոր կը յաջորդէ 1835-ին Բէէրէն, 1844-ին Արիւս և ուսն զննապետ Խուցկո, 1850-ին, նոյնիսկ հինգ օր մնաց գաղաթի վրայ կապերտներով յարգարուած վրանի մէջ. կատարելու համար եռանկիւնաչափական աշխատութիւն և դաղաթի ճշգրիտ չափում: Ազկէ վերջը ըստ Վ. Ռիկո մըրսի. — Ռիկո մըրսի տուած ցանկին մինչև 1894

դեռ տասնեութը վերելք կատարուած պիտի լինի: 1896-ին ուսուցչապետ Հ. Արեւկտանյ Յիւրիսէն յաջողեցաւ բարձրանալ Արարատ լեռը և աղօր մասին տեղեկութիւն տուաւ 1898-ին զուեյեռական ալպեան ակումբի Ուլո ըսթանման մէջ: 1897-ի սեպտեմբերի վերջը լեռը բարձրացաւ դոկտ. Ա. Օսվալդ, որու մասին 1899-ին S. A. G. տարեգրքի մէջ երեցաւ ամփոփ աշխատութիւն մը: Իր վերելքը մասամբ ողբերգական եղաւ, երբ ընկերացողներէն Պ. Շտէօբեր՝ Վլադիկաւկադէն, դժբաղդ մահ մը ունեցաւ վերելքի ատեն: Բայց, ինչպէս վերջերս պարզուեցաւ, սղանաւած է եղել, իրենց պաշտպանութեան համար տրուած հետեակ կողաքննութեւ կողմէ, անոր ժամացոյցին և գրամին համար:

Ով անգամ մը Մասիսի վեհախառ պատկերը տեսած է Երեանի վանքի պատշգամէն, նա կը հասկնայ, որ աւանդութիւնը, այս րացառիկ լեռան կերպարանքին պիտի յաղթէր և անոր աստուածային յարգ տար: Ալպերէն նոր եկող սկսնակի մը ուժգին աղ-ղեցութիւն մը չպիտի ընէր այս լեռը, իր պարզ, ազնիւ ձևերով, բայց շուտով անոր կը պարզուին հսկայական մեծութեանց յարթերութիւնները, և կը զբաւէ երկար աչք ու միտք: Երասիի հսկայական, մօտ 1000 մեթր բարձրութեան տափարակի վրայ կը բարձրանայ ան իրրեւ կղկիտցած հպարտ իշխան մը դեռ 4200 մեթր աւելի բարձր: Անկէ աւելի արեւելք գտնուող մօտ 1200 մեթրը ցած, ամռան ու աշնան ձիւնէ ալատ դադաթը փոքր Մասիսի, անոր վնաս չի տար: Դժուար թէ աշխարհի վրայ նման հսկայական կառուցուածք մ'ալ գտնուի: Նոյնիսկ Անտերու հըսկաները իրենց համարեա 7000 մեթր բարձրութեամբ անոր հետ չեն կրնար համեմատութեան մտնել: Անոնք նուազ առանձնացած են և վեր բարձրացած համարեա 4000 մեթր բարձրութեան բարձրահարթերէ:

Ինչպէս հոս ամբողջ երկիրը հրաբխային է, այնպէս ալ Արարատի զանգուածը հսկայական մարած հրաբուխ մ'է, թէ առայժմ մարած է, կը տարակուսեմ: Ան կօնաձև, վերը տափակ լեռ մ'է, որու վրայ կը գտնուին երեք մեղմ կորնթարդ ձիւնապատ

գաղաթիւներ: Դէպի հիւսիսային արեւմուտք, ըստ երեւոյթին ձիւնածածք դարը մեղմօրէն կ'իջնայ վար, մինչ ղեռ գէպի այլ կողմեր շուրջանակի չափազանց թեք վար կ'իյնան, գէպի հիւսիսային արեւելք և հիւսիս կը գահալիժի ան, մութ հսկայական պատերով, որոց վրայ ահագին ձիւնադանդուածներ կը նստին, մեծ սառցագետ մը կը հակի գէպի հիւսիս՝ Սուրբ Յակոբայ ձորը, մինչև 2500 մեթր: Ձեան սահմանը կրնայ 4400 մեթրի վրայ լինել, լայն առանձին ձիւնակոյտերու և սառցադետերու լեզուակներ 1000 մեթրէն աւելի վար կ'իջնին: Մեծ Մասիսի և գէպի արեւելք անոր քով գտնուած Փոքր Մասիսի մէջտեղ իրեւ անցը դործածուած թամբա մէջը կը գտնուի Սարգար բուլաղը՝ 2540 մեթր բարձրութիւնը: Ասոր վրայէն կ'անշնի թուրք-պարսկական սահմանը և այն կողմը, մօտ 250 մեթր աւելի վար, սահմանէն քիչ մը պակաս հեռու կը գտնուի համանուն ռուսական զինուորական կայանը: Անկէ կը ձեռնարկուին վերելքները լեռան արեւելեան կողմէն, որ համեմատաբար զիւրաժատչելի է, ուշ ամռան մեծ մասամբ թոյլատու, փլածքներու և ժայռերու լեռնալանջերու վրայէն հասնելու, համարեա անձին գետնի վրայով գալաթը:

Այս ամեն ըսածներով կրնան լուսարանուիլ, թէ ինչու ուղեորութեան մասնակցողներու մեծ մասը այնչափ կը ցանկար այս հրաշալի լեռը բարձրանալ: Ամեն ինչ կը նպաստէ զայն շատերու համար ցուցնել համարեա՝ իրեւ փայլուն կէտ մը մեր ճանապարհորդութեան: Որ առաջին հայեացքով այնչափ զիւրին երեցող ձիւնակոնը, այնչափ զիւրութեամբ ամենքին չի յանձնուիր, կը լուսարանուի այն մեծ թռուով մերժողներով, որոցմէ պիտի յիշեմ համբաւաւոր լեռ բարձրացող D. M. Freshfield և C. Tucker, որ իրենց առաջնորդ Ֆրանսուա Ֆոն Շամունիի հետ, 1868-ին բարձրանալու փորձէն ուժաոպառ ստիպուած կը լինին ետ դանալ: Բայց մենք փորձենք:

Մինչ այս մինչ այն Արալլիսի մէջ ձիւրու մէկ մասը կը հասնի և սայլերու մէկ մասը ետ կ'արձակուի կամօրլու: Ժամը 11 ու կէսին լեռ բարձրացողներու առաջադահը ձիւով ճամպայ կ'իյ-

նայ, միւս կէսը երկու ժամէն անոնց կը հետեւի և ուղտերով կը հետեւի ուտակու պաշարը, թիկնապարկերը և ուրիշ հանդերձանք: Ստացուած ձիերը չափազանց վատ էին, խղճուկ, խարանուած, յողնած, արտի լծակներ, ասոնց մէկ զոյգը մատակ ձի, իրենց ետեւէն քուռակները: յուզիչ տեսարան մը: Շատ աւելի ողորմելի էին թամբերը: Միայն քանի մը հատը իսկական թամբ էին և մեծ մասը անոր տարրերը կամ նոյնիսկ մէկ երկու մորթի կամ ծածկոյի կտորներ տակը ձգելիք: Ասպանդակները, եթէ կային ալ, հազիւ գործածելի էին, սանձի տեղ մեծ մասով պախուրց էին, և այսպէս պատահած է բոլորին, որ Կովկասի մէջ վարժուած են արդէն և գործածելի հեծելազօր դարձած:

Արալըխէն սկսած 30 կիլոմէթր երկարութեան ուռուցքով մը կը բարձրանայ փլածքէ կոնը դէպի բուն լեռնազանգուածը Մասիսի, հեղահետէ 1500 մէթր բարձրանալով, մաշուած հեղեղատներ, ձիւնահալքէ և գարնան անձրեւէ բացուած, կ'ախօսեն գետինը, շատ տեղեր վկայ են պատահական ջրհեղեղային անձրեւներու զոյլութեան: Այրող արեւը կը խարէ ձի ու ձիաւոր և զանդադօրէն կ'անցնինք փշոտ մացառներով լի տափաստանային մագոլթեան մէջէն, որովհետեւ այսպիսի է վայրը, մեր Արալըխը թոյնեղէն սկսած: Երեք ժամէն կը հասնինք Ակոուի, զինուորական կայան մը, համանուն գիւղին քով, որ Ս. Յակոբայ ձորին ելքին վրայ կը գտնուի 1840-ին այնտեղի համար սովորական երկրաչարժով մը առաջացած լեռան փլուզումով և սառցադետի քայքայումով, թէ վանքը և թէ հին Ակոուի գիւղը կործանած է և կ'ըսուի, թէ այդ ատեն 1900 հոգի զոհուած են: Ժամանակ չունենալուս չիրցանք Ս. Յակոբայ քայքայուած ձորի վիհը բարձրանալ. փառահեղ տեսարան մը պէտք է ունենայ:

Հեղահետէ Ակոուի կը հասնի կէսօրէ վերջը և երեկոյեան մեր ընկերութեան երկրորդ կէսը, ցրուած խմբակներով: Հոս և ամենուրեք ամբողջ ճանապարհորդութեան ընթացքին մեր սիրելի ընկերներ՝ պ. Էրիզման և օրիորդ Չախմախճեան, իրրեւ անհրաժեշտ թարգմաններ, սրանչէլի ծառայութիւն մատուցին: Հոս ալ

անոնց շնորհակալութիւն: Առանձին խմբակներ առաջացան Սարգսար բուլախ բարձրագոյն գինեորական կայանը: Հոս ամեն ինչ քայքայուած էր, թէև աստանդական քիւրքերու պատճառաւ, որոց բնակութիւններէն քանի մը անգամ անցանք: Անձնական ապահովութեան համար ամփոփ երթալը լաւագոյնն էր: Նաև աւելի լաւ պաշտպանուելու համար քիւրքերու գամփոններէն, որոնք կ'սպառնան անհատ ճամպորդներն համարեալ բլքաւ: Բայց և այնպէս աղէկ անցաւ: Գիշերուան ժամը 10-ին առաջիններն հասան գինեորական կայանի առաջ և միջոցներով առաւօտեան ժամը 9-ին վերջինները: Ասոնց կը պատկանէին նաև տեղեկատուութեան երկու մասնակիցները: Ճանապարհին շեղումով մը նախամեծար համարեցինք միջանկեալ գինեորական կայանի մէջ քանի մը ժամ դադար ընել և լոյսը բացուելուն մեր ճամպոն շարունակել: Իմ համեմատաբար սոկուն ձիւ, իր լաւագոյն թամբով Ալիուիի մօտ առան և պարկը կոնակիս ստիպուեցայ ոտքով շարունակել ամբողջ տարածութիւնը: Պատերազմի ժամանակ կը յաղթէ միմիայն եսասիրութիւնը և այդ ատեն կէս մը կռուի ժամանակ էր:

Սահմանի պաշտպանութեանը, ժեր մաքսանկեղութեան հըսկողութեան և ամեն բանէ առաջ ամբողջ Մասիսի շուրջը բնակող վայրենի ցեղերու վրայ հսկողութեան համար հաստատուած են զանազան և մասնաւորապէս Սարգար բուլախի գինեորական պահականոցները:

Ամուսնացած հարիւրապետ մը քանի մը սպաներով և մօտ 50-60 գինեորներով, զբաւած է ամբողջանման չէնքը, որու սըրահներու մէջ աւելի քան 200 հոգիի տեղ կայ: Հաստաբեւս կառուցուած միայարկ տները կը կազմեն որմոճերպերով շինուած, հաստ որմերով ամրացած քառանկիւնի մը, անկիւններուն փոքրիկ աշտարակներով, որու մեծ բակը ունի միակ հաստատուն դուռ մը, որ միշտ հսկողութեան տակ է: Նւ լաւ հսկողութիւնն անհրաժեշտ է, որովհետև տարիներ առաջ անգամ մը գիշեր տատեն պարսկական քիւրքեր յանկարծ կը յարձակին և ամբողջ պա-

հակադօրքն, որու բոլոր բնակիչները 60 հօգիէն աւելի կ'սպանեն: Ներս սողացող աւազակները դաշոյններով քնած զինւորներու զլուխները կը կտրեն և բոլորն ալ առանց զլուխ կը թողուն:

Ապահովապէս կարդարանան բոլոր ճանապարհորդական զըրքերու և նկարագրութեանց մէջ ըսուած զգուշացումները քրդական այս աւազակային խումբերէն: Ասոնք առանց հաստատուն բնակութեան վաչկատուն կեանք կը վարեն Մասիսի վրայ, մէկ երկրէ միւսը անցնելով: Մուրացկանի չափ աղքատ են շատերը և մարդկային կեանքը արժէք չունի: Չարդ մը, անգամ քիչ մը զրամ ունենալը կրնան արդէն սպանութեան մղել տալ: Ո՞վ այնուհետեւ մարդասպանը կրնայ գտնել և ձերբակալել: Մեծ մասամբ չեն գտնուիր և շուտ մը կը փախչին մէկ պետութենէն միւսը և արդէն անգտանելի կը լինին: Այս մարդոց զաւանդութիւնը շատունց աղարտուած է և եւրօպական, թուրքական պատերազմներու մէջ, նորագոյն ատենները, ինչպէս ամենէն վերջինին մէջ, պատմութիւնը շատ բան կ'ըսէ: Այս բանը կրնան հաստատել նաեւ նստակեաց և դժբաղդ հայ բնակիչները շրջապատի երկիրներուն: Անտարակոյս մեր ուղեկիցներու մեծ մասը զինուած են ատրճանակներով, Բայց այս ատրճանակը ի՞նչ ունի, մեծ մասամբ նորագոյն վինչեստըր հրացանով զինուած և քաջ հեծեալ աւազակներու հանդէպ: Ճանապարհին հարիւրաւոր առիթներ կան ետեւէն սպաննուեցնու և այսպէս այս քիւրդերը, հակառակ ուռուական հսկողութեան, երկրի տերերն են: Ապահով լինելու համար 150 ուռլի (մօտ 400 ֆրանք) փրկագին պէտք է տալ որպէսզի ապահով կերպով կարողանանք Մասիսի վերելքը կատարել: Կ'ըսուի թէ ասոր համար որոշ սակ կայ, 12—15 ուռլի մարդ զլուխ. Մասիսի շուրջը կը տեսնուին քրդական վրանները՝ հասարակ, քանի մը ձողերու վրայ հանգչող ծածկոցներ, որոնք հիւսուած են կոշտ, թուխ ուղտի ստեւէ: Մէջերը գտնուած ճերմակ, յաճախ բնակութեան բոլորովին յարմար վրանները կը պատկանեն թաթարներուն, որոնք քիւրդերէն շատ քիչ բարձր քաղաքակրթական աստիճան մը ունենալ կը թուին:

Զինւորական կայանէն վար, որմապատ աղբիւրէ մը կը հոսի հրաշալի ջուր մը, խիստ բացառիկներէն մէկը Մասիսի վրայ, որովհետեւ ձիւնէ հալած ջուրը անմիջապէս կը ծծուի հրաբխային հողէն: Այլ ու առուակ անծանօթ են, ջրի ոչ մէկ զուարթ մրմունջ կամ կարկաջ կը լսուի հոն: մեռելային լուծիւն է ամենուրեք: Այս աղբիւրի շուրջը, որմէ հեռուէն կ'ուզան ջուր տանելու, կը տիրէ, եռուն, չափազանց հետաքրքրական կեանք. կիներ ու աղջիկներ զայն շրջապատած են և առանձին ձեռով, վարը նեղ կուժերով, որ շնորհալի կերպով կը կրեն իրենց մէջքին, ջուր կը տանին վրանները: Թէև մեծ մասամբ ցնցոտիներ հազած, յաճախ կը տեսնուին ազնուացեղ գեղեցիկութիւններ. և նոյնիսկ դասական գէմքեր կ'երևան ազտ ու կեղտի մէջ:

Կ'երևան բազմաթիւ հօտեր ոչխարներու, արջառներու, ինչպէս նաև ձիերու: Դժուար է հասկնալ, թէ այս խանձուած տափաստաններու վրայ ինչպէ՞ս կրնան բաւարար սնունդ ստանալ, քանի որ հոս Հայաստանի մէջ, որ հաճարի հայրենիքն է և բուսարանները մեր ուշադրութիւնն ագոր վրայ հրաւիրեցին, զըտնւեցան յաճախ վայրի վիճակի մէջ մանրահատ. այս բանը կը ցուցնէ հողի բերրիութիւնը և խոտի հիւթեղութիւնը: Շատ հետաքրքրական էր նաև կեանքը քրդերու վրաններուն մէջ և շուրջը, որ այսքան նկարագեղ կերպով բանակած են տակէ համարեա 3000 մեթր բարձր Մասիսի գագաթի ստորոտը: Այստեղ, որ այս ազգացեղաբանական ուսումնասիրութեան համար այսքան քիչ ժամանակ տրուած է և ուղեորութեան այս մասը շատ հապճեպ կը կատարուի: Արագօրէն միայն կարելի եղաւ այցելել այս լնակութիւնները և լուսանկարչական նիւթ հաւաքել: Հոս մանուկներու խնամք և մեծ լուայք վրանի մէջ, հոն ճաշի պատրաստութիւն, կրակի վրայ տրուած պտուկի մէջ, անդին նախնական ոտառայնակի հոր մը դուրսը, որու վրայ ժիր կ'աշխատին, և մօրթէ ուրրդէ ոտնամաններու պատրաստութիւն ալ կը տեսնուին: Հոս կով մը կը կթեն, բայց ագոր համար քովը զտնուած հորթը ծըծերէն պէտք է նախապէս ծծէ. հոն ոչխար կը մօրթեն խորովա-

ծի համար և երկար փայտէ շամփուրներու վրայ կը խորովեն: Լէշուժ կեանք ամենուրեք: Մեզ, օտարականներս զարմանքով կը զիտեն: Քիւրդ կանանց հասարակ գործերը սակարկելու և դնելու բաւական ժամանակ կար: Բայց և այնպէս հեռանանք, ժամանակը չի բաւեր:

Զինուորական կայանի մէջ մեր ընկերութիւնը մեծ հիւրասիրութեամբ ընդունեցին, պարապ սրահ մը պատրաստուեցաւ ու թէյէ և լաւ հիւթեղ բուսական կաղամբապուր (բորշ) և սև հաց տրուեցաւ, ինչ որ զինուորներու ճաշն է. մեծ ամաններու մէջ փայտէ դգալներով միասին կերանք: Միայն քիչ ժամանակ ունէինք. Բուսարանները փոքր Մասիսի ստորոտէն, որ զարդարուած է ցած ցարաօի անտառակով մը, որ կայանի վառելիք փայտը կուտայ, բարձրանալէ յետոյ ետ կը դառնան կէս օրին. իսկ առաջնորդը երկու ժամ ուշ մնացած լինելով, արդէն ազատարար խմբակ մը կը կաղմակերպէինք, վախճալով թէ քիւրդերու կողմէ յարձակում կրած և միասին տարուած են: Վախը անհիմն չէր, քանի որ քանի մը հազար ռուբլի ունէր իրրեւ ճանապարհորդական դրամ, որ եթէ յայտնի լինէր, այն ատեն մեր համալսարանն այսօր պիտի սպար իր դէպի վեր ձգտող լաւագոյն զարդը. — բարեբաղդարար, սակայն, նա արտաքուստ կրեսոսի մը նմանութիւն չուներ:

Մասիսի վերելքին մէկ օր ժամանակ կը տրուէր, այդ դժուար ելքին համար: Յաջորդ օրն արդէն բուսարանները վերադառնալ կ'ուզեն. չբարձրացողները, ըստ կարելոյն շուտ պէտք է անոնց հետեին, ուստի ժամանակ կորցնելու չէ, քանի որ դեռ այսօր իսկ ձևան սահմանի վրայ պահնորդութիւն մը պէտք է հաստատել. ձամպուլ պաշարէն, որ մէ բարձր լեռներ բարձրանալու յատկացուած պտուղ է պահածոները կը պատշաճին և վերելքի յաջողութիւնն ալ անոնց կը պարտինք, մաս մը թիկնապարկերու մէջ գետկեղին. չնայելով, որ արդէն ծանր էր, քանի որ պահնորդութեան ծածկոյցներն ալ անձամբ պիտի կրէին: Իրրեւ առաջնորդներ կայացաւ քիւրդերու պես Ահմէդ բէյ. ապահովարար առաջնակարգ աւագակ մը, որ արդէն շատ մը դործեր ըրած է: Այս

մարդը մարդու երեսին բնաւ չէր նայէր, և անհանգիստ կը փայլ-
փըլէին իր հոգու հայելիները: Ուսին ունէր հրաշալի վիճակաւ մը և
փամփոշտակալի մէջ, որ կուրծքին վրայ կը գտնուէր մօտ 50 ի չափ
փամփուշտ դործածութեան պատրաստ: Մէջքի գօտիէն կախուած
էր հրաշալի դաշոյն մը զոր ունենալ կ'ուզէին: Բայց բոլոր նոյ-
նիսկ կրկինէն աւելի չափազանց առաջարկով գնելու առաջար-
կիս հանդէպ անդգայ մնաց, իր պէնքը իր համար ծախու չէր՝
կրկնակի թարգմանուած պատասխանն էր: Բայց մինչ այդ կը
նկատէի, թէ չափազանց հետաքրքիր ակնարկը ուղղած է ժամա-
ցոյցիս շղթային և ժամացոյցիս, որ 24 ժամ կը ցուցնէր: Սէքն
անկէ չէր հեռացնէր և այս պատճառով և առաջարկեցի երկուքն
ալ իրրեւ նուէր, եթէ ինքն ալ իր դաշոյնը կ'ուտար իրրեւ հակա-
նուէր և տես որ հաւանեցաւ: Երկու կողմի համար ալ յաջող
առեւտուր մ' էր, իմինիս վրայ կ'աւելնար նաեւ փափաքի արժէքը:
Չնայելով, որ այս մարդու ընկերակցութեամբ վայելէինք իր
ցեղի ասպնջականութիւնը, բայց և այնպէս ռուսական սոսճա-
նային ամբողջական հրամանատարը լաւ համարեց մեր ամբողջ
բացակայութեան ընթացքին քիւրդերու այդ պետի եղբայրը իր-
րեւ պատանդ իր քովը պահել:

Մասինսի գաղաթը ձգտող 17 ուղեկիցներէն գատ, Մեսրոպ
եպիսկոպոսն ալ կ'ուզէր միասին գալ, բայց ռուսական ամբու-
թեան հրամանատարը կը մերժէր արտօնութիւնը, որովհետեւ Մես-
րոպ եպ-ը անցաթուղթ չունի և մենք վերելքի ատեն կը շօշա-
փենք օտար պետութեանց հողեր: Այս չքոտի քրթմնջիւնը մեզ մէ-
կից մօտ մէկ ժամ. միայն միացեալ խնդրանքը ի վերջոյ բարձ-
րացուցած ձեռքերս ալ յաջողեցան հարիւրապետը համաձայնեց-
նել: Նա կ'ըսէր, իրրեւ աւելարդ ծերունի մը, որպիսին ես եմ,
իրմէ կը խնդրեմ զեռ, պէտք է որ տեղի տամ, թէ և այս պատճա-
ռով վերէն ծանր յանդիմանութիւն մը պիտ ստանայ: Երբեմն
ծերութիւնն ալ իր առաւելութիւնն ունի:

Այսպէս ճամպայ կ'ըլլենք թիկնապարկով բեռնաւորուած և
քարհատ մուրճով զինուած 3½ ին, կէս օրէ վերջը ամբողջեան զըռ-

նէն Ա. օրիորդ դուկտ, Զախմախչեանն ալ մեղի հետ էր, որ իբրեւ ծագումով հայ կ'ուզէր տեսնել նոյեան տապանի հետքերը: Դըսան և մէկ հոգի ենք, որովհետեւ քիւրդերու պետը առանձին բռնակիր մ'ունէր ու կը կրէր նա իր զէնքը միայն: Մեղի միացաւ նաև ռուս մը, բայց որ երկու ժամէն վերադարձաւ:

Այս երկրի մէջ ամուսն և ձմռան լաւ եղանակ կը լինի միշտ. հոգ ընելու պէտք չունինք, միայն պէտք է որ մեր բաղդը բաց լինի, որ գագաթը, որու շուրջը սովորաբար առաւօտեան ժամը Գէն սկսած մինչև երեկոյ ամպապատ կը լինի, առաւօտը ազատ լինի:

Խիստ դժուարամատչելի տեղերէ կ'ուղևորինք, հսկայական լաւայի հոսանքներ կը կազմեն իսկական լեռնաշարքեր և իր ձորերու մէջ ժամեր մեր ակնարկը կը հեռանայ դադաթէն: Անծանօթի համար մեծ շեղումներ կրնան պատահել: Սկիզբները տաքութիւնը կը նեղէ, բայց շուտով կ'ունենանք լեռնային օդ և արևի մայրամուտէն յետոյ արագ կը զովանայ: Կը հասնենք լաւայի փլածքներու դաշտերը և բարձրանալը կը դժուարանայ: Վերջալոյսին կարաւանը կը հասնի առաջին ձիւնաշարթին հալող ջրերուն և ամեն մարդ կը յագեցնէ իր պապակը: Արդէն շատոնց զիշեր էր երբ մօտ 3200 մեթր բարձրութեան վրայ ժամը 7 ու կէսին լաւայի մեծամեծ կտորէ փոքր ժայռի կրկէսի մը մէջ դադար կ'ընենք, և կը ձենարկինք պահնորդավայրի կառուցման, որ շուտով կը վերջանայ, աւագուտ գետինը կ'ստանայ համեմատաբար փափուկ նոստովայր մը և իւրաքանչիւր մարդ կը փորձէ պաղ զիշերային քամիէն պաշտպանուիլ հնարաւոր չափով, մեծ ժայռակոյտերու ետին: Երջանիկները եփելու մեքենայ ունէին. միասին թէյ կը մատակարարէին, պահածոյ ձուկ և կրկնեփ կար, բայց մինչև այժմ ունեցած և դեռ ունենալիք յոգնութեանց համար սնունդը անբաւական է և միւս օրն զգալի է:

Ժամը 10-ին ծագող լուսինը կը լուսաւորէ քնացողներու մունջ խումբը. բայց ան չի տաքցնիր և կէս զիշերէն շատ առաջ դարձեալ ամեն ինչ շարժման մէջ է. պաղութիւնը շատ զգալի է:

Սուանց շաքարի պաղ թէյ և կրկնեփ է մեր նախաճաշը: Մածկոց և այլ ամեն ինչ որ աւելորդ է ժայռի կտորներու տակ և անոնց ճեղքերու մէջ կը պահենք և ժամը մէկին արդէն առաջին տասնեակը ճամպայ կ'ելլէ: Դոկտ. Վ. Ա. Քեյլէր կ'ստանձնէ առաջնորդութիւնը: Մնացած իննը հոգին որոնց մէջ Մեսրոպ Լալիս-կոպոսը և քիւրդ բեզը իր բեռնակրի հետ, կը հետեին ինձի հետ կէս ժամ յետոյ գուարթ թափով մը, կը յառաջանանք առանց լապտերի: Ըռտինը լաւ կը լուսաւորէ, բայց ճամպան անմիջապէս կը զգուարանայ. ստուէրի տակ մեծ ժայռակոյտերու վրայէն հազիւ կարելի է առաջ երթալ և պահապան հրեշտակները բաւական մեծ դործ ունին արգելելու, վիզ ու սրունդ խորտակելէ: Մակոզ ցուրտ է, և զօրաւոր հովը համարեալ կ'ընդարմացնէ, բայց ամեն պարագայի դանդաղ կը բարձրանանք, ժամը 4-ին մօտ 3900 մէթր բարձրութեան վրայ կը բաժնուին երկու լեռնախտաւոր և Լալիս-կոպոսի խնդրանքով անոնց կը միանայ քիւրդի բեռնակիրը, բայց միայն առերես. նա կ'աներեւութանայ այլևս չերևալու համար իր հետ ալ առաջնորդի և Լալիսկոպոսի պաշարեզէնը, որ վերջը զգալի եղաւ: Արդէն միջազի մէջ գազաթը կ'երևայ: Քարի պէս սառած ձիւնոտ տեղերու, փլածքներու և լաւայի ժայռերու քայքայուած զառիթափերու վրայէն բարձրանալով կը յառաջանանք: Ժամը 6-ին հետու հորիզոնի մշուշոտ շրջագծէն կ'երևայ արևի հրաշէկ դուռը, ուրախութեան ուղջոյնով, որովհետեւ բոլորս ալ կէս մը սառած ենք:

Երկար կը հանդուստանանք և որովհետեւ բոլորս ալ ծարուէ կը նեղուինք. տուփ մը պահածոյ սալոր, որ իննը հոգու վրայ բաժնելով չառ քիչ կ'ուգայ: Կրկին դէպ յառաջ, թեք լեռնակողերը կը մնան աջ կողմը և բարձրանալու առաւելութիւն չեն տար: Լաւայոտ կողերէն, թէև սեպ, բայց աւելի դիւրին կը բարձրանանք, բայց ծանր ու դանդաղ ամեն վայրկեան մէկը կ'ուզէ հանդուստանալ, ուր որ կարելի է քնանալ և օդի քաղցը կը նեղէ ամենքը: Սակայն թէև մօտ 4300 մէթրի վրայ ենք, անշուշտ ոչ նօսր օդն է, այլ վհատութիւնն ու սնունդի պակասը, որ ասոր

սլատճառն է, բնականոն վիճակի մէջ չենք: Եթէ լաւ կերած և հանգստացած լինէինք նախապէս, այս միջանկեալ ժամանակի մէջ թարմ և առաձիգ կրնայինք բարձրանալ:

Տեսարանը կ'ընդարձակուի, փոքր Մասիսը շատոնց ոտքերուս տակն է, բայց զարմանալի է որ ըստ Երեւոյթին չուզէր խոնարհիլ: Բացառիկ հրաբխային կազմուածք մ'է և, հարաւային զառիթափին փոքր մակարոյժ հրաբուխի խառնարաններ ամեն մեծութեան և ձևի մեզ մէջ վար կը գտնուին: Ափսոս որ մեր հանած սլատկերները ոչ մէկը որոշ եղած է: Նուրբ մէզ մը կը խանդարէր հանելը խորութեան և հեռաւորութեան համեմատ, ասկէ զատ դեռ շատ կանուխ էր: Ամբողջ վերելքն ու ականարանները ինքնին կը յիշեցնէին շատ անգամ Թեներիֆայի հոյակապ փրքութէտը. միայն հոս ամեն ինչ աւելի հսկայական էր: Նորաշէն է նաև վիթխարի 12 կիլոմետրի չափ լաւայի հոսանքը մեզ մէջ վար, կըսէ ակօսներով շրջապատող, ամեն սլարապայի քարացած թուփերու միջև: Վերելքի ատեն կը հանդիպէինք շատ մը հին գիշերելու վայրերու, ուր ուրիշ բարձրացողներ արդէն հանգստացած էին:

Սովորաբար հիմա աւելի բարձր կը գիշերեն և իջնելու ատեն նորէն կը գիշերեն: Մենք կը բարձրանանք այն սեւ սլատներով կազմուած երկար անցքէն, ուր ձիւն և ժայռերու տակ ալ յաճախ սառույց կը գտնուի և հալած ջրէն սառցածողիկներ կախած են, որ վախ կազդէ անսովոր լեռ բարձրացողներու վրայ:

Մերօրս եպիսկոպոսը և Ամստերդամի ուսուցչապետ Թ. Ստոմս այնչափ դանդաղ կը յառաջանան, որ մենք չորսս զուտ անձնապահուածութեան զգացումէ մղուած վերջապէս արագ առաջ կ'երթանք վախճալով, այլապէս դադար չի հասնիլ: Ուսուցչապետը այնուհետև բոլորովին ետ մնաց. նա լեռնախտ ունեցած էր. բայց անհաւատալի, իրեն երբեք չի վստահուած կորովով կ'աշխատէր Մերօրս եպիսկոպոսը, դանդաղ, մեր ուղղութեամբ դէպի վեր, բայց ժամեր զինքը չենք տեսներ: Քիւրդերու առաջնորդը մեզմով շատ քիչ կամ երբեք չղրադուիր, նա մեզմէ առաջ է և յաճախ չերեար: Ինձի ընկերացող զոկա. է. Ռիւբէլ, զոկա.

կռառւզն և քեռորդիս փիլիսոփայութեան ու բժշկութեան թեկնածու պր. Պրէլ լաւ են. և ժամը 10 ու կէսէն յետոյ նրբանցքը և ժայռէ պատուարները անցած ենք և հասած բարձրագոյն փլածքէ լեռնամասը, արդէն 5000 մեթր բարձրութիւնը: Ահա արդէն մեզմէ առաջ գնացող տասը հոգին գազաթէն ետ կ'ուզան մեզի հանդէպ: Ժամը 9-է սկսած նոքա իրերայաջորդ, բայց միայն ծայրահեղ ջանքով բարձրացած են. և մեզի սիրտ կ'ուտան: Շուտով կը հասնինք:

Բայց վերջին 200 մեթրը կը կազմեն համարեալ՝ 40-աստիճանի կողմը անկանոն փլածքէ զանգուածներու: Հոս տառաջիօրէն երեք քայլէն երկուքը կ'ընկրկինք և այնպիսի աստիճան երբ մարդ հաղիւ թէ դեռ առաջանալ կրնայ. բոլորս ալ յաճախ քիչ կը մնար, որ ընկճուէինք, բայց մօտակայ նպատակը մեզ կը սրբապնդէր շարունակ և վերջապէս 12ին հասանք (5160 մեթր). Մասիսը մերն է. փո'ռք Ասածոյ, որ վերն ենք. կը զոչեն բոլորը: Յաղթութիւնը գոյուարութեամբ ձեռք բերաւ պարտութիւնը: Ինչպէս ճիշդ երկու շարաթ առաջ կազրէկի վրայ, բայց հիմա աչքը կը վարձատրուի հեռահայացքով մը, որու նմանը այլեւս գոյուար թէ ունենանք և հակառակ սոսկալի ցուրտին լաւ մը դիտեցինք հեռուները. հոս տեսաշրջանը. — հորիզոնը 340 կիլոմետր է. ափսոս, որ կովկասը ծածկուած է սպիտակ զարմանահրաշ ձեւերով ամպաշուրթով մը, որ այնտեղի լեռնագագաթներու պատրանքը կ'ուտան և կը փոխարինեն: Սե ծովն ու կասպից ծովը կը լողան մշուշի մէջ, այլապէս անոնք ալ պէտք է երեւային: Բարեբաղդաբար բաղդ ունցանք որ այսօր հաղուադէպ բացառութեամբ մը ամբողջ օրը մշուշէ ալատ մնաց գազաթը: Անտահման է տեսարանը այնպիսի մեր տկնարկը կը պատահի այրուած անապատներու, հաղուադէպ է կանաչ ովասիս մը տեսնելը, բայց կը տեսնենք Եփրատի հովիտը և շատ հեռու դէպ Ասիա, հեռու մինչև Թուրքիա և Պարսկաստան. և կը տեսնուի հարաւ արեւելեան կողմը անթիւ լեռնաշղթաներ հորիզոնը եզերող, մէկը-միւսի

վրայ հաւանաբար բոլորն ալ 4000 մեթրէ աւելի բարձր և կարօտով կը կարծես տեսնել Հիմալայի ճիւղաւորութիւնները:

Գագաթի տափարակը շատ աւելի ընդարձակ է, քան ինչ որ մեր կարգայած անդեկագրութեանց մէջ ըսուած է: Քանի մը գումարտակ զինուոր բանակելու՝ բաւական տեղ կ'ունենան: Կարծրացած, ապակիի ամբուլթեամբ ձիւնասառոյցը կը ծածկէ ամեն բան և միայն հոն, ուր սառը ձիւնափոշիով ծածկուած է, աւելի լաւ կարելի է քայլել և կանգնել: Նախապէս յիշուած մեղմուսոյց ձիւնածածկ գագաթի լուրներէն երկուքը կ'այցելենք, բայց քիչ մը դէպի արևմուտք ընկած երրորդը չենք բարձրանար: Գոչենման ձիւնը հոն կ'երեւայ և մենք այնչափ յոգնած ենք, որ Ալպեան այս փառաւորութիւնն ալ, որ զեռ երկու մեթր բարձր է, չենք ոտք կոխիր: Այս բանը չկատարելու յանցանքը մեզ կը նեղէր, սակայն և կ'ամչնանք մեր նախորդներէն, որոնք աղահովաբար հոն բարձրացած են: Որչափ մեծ եղաւ սակայն այնուհետև մեր ուշխութիւնը երբ երեք օր վերջը իմացանք, որ կտրիճ լեռ բարձրացողներն ալ նոյնպէս ըրած են, զոհացած են եղածով և երրորդ գագաթը զանց ըրած:

Այնուհետև կը դառնանք առաջին կատարը, ուրկէ տեսնել կրնանք վերջին վերելքը: Հոն շատ վարը կը տեսնենք Մեսրոպ Եպիսկոպոսի գալը: Աստուած գիտէ, որ ինքն իրեն ոյժ կ'ուտայ. կեցցէ Մեսրոպ, կը կանչենք, կեցցէ. և ժամ մը կոչով գնա կը քաջալերենք: Քանի մը քայլ նորա կողմը կ'երթամ, խեղճ մարդը չափազանց յոգնած է. կանաչ դեղինը երեսին կը դողայ ամբողջ մարմնով և հեալով շունչ կ'առնէ, բայց երկաթէ կորովով յաջողեցաւ յաղթել: Այժմ վերջին քայլերը և վերջապէս ոտքը կը դնէ գագաթի սառոյցին վրայ, զայն կը համբուրէ, կ'արտասուէ և կ'ուռայ մանուկի մը պէս: Մենք ետ կը քաշուինք խոհականօրէն: Մեսրոպ ծնկի կ'ուզայ և կ'աղօթէ քանի մը վայրկեան, նոր ի նորոյ մէջ ընդ մէջ համբուրելով և գրկելով սառոյցը: Յուզիչ է, մեր աչքերն ալ կը թրջուին. բարի բարեպաշտ մարդը, փոքր հա-

սակէն տարիներ նայած է լեռան և հիացած վանքէն, վերեւքի ուխտ մը ըրած և երկար տարիներ սպասած է և տառապած: Եւ այժմ իր սրտի երազը կատարուած է և արդէն կանգնած է Մասիսի գլուխը և այս սրբազան դիտարանէն բարձուսա կը դիտէ զայն շրջապատող, ստրկացած հայրենիքը: Զգայացունջ էր և ամբողջ կեանքիս մէջ այս զազաթի հանդիսաւորութիւնը գլխուս և սրտէս մէջ պէտք է դրուած մնայ: Կեցցես Մեսրոպ, ապրի քս հայրենիքը:

Դեհ եկ և քեզ կազդուրէ: Մենք արդար կերպով պահած էինք անոր դժբաղդաբար սակաւիկ պաշարը, որմէ քիւրդերու աւաղակապեան ալ իր բաժինը պիտ ստանար: Դեղարանին մէջ զեռ իւրաքանչիւր մարդու համար 2-3 խորանարդ սանտիմէթր կօնեակ կար, որ ուրախութեամբ առնուեցաւ, միայն մահմեդականը մերժեց: Քառորդ ժամ մը հանգիստ կ'ուտանք Մեսրոպին, այնուհետեւ պէտք է մտածել վայրէջքի մասին: Ասկէ զատ մենք համարեա թէ թմրած ենք ցուրտէն ու պաղ քամիէն: Արդէն երկու ամբողջ ժամ է որ զազաթը կը գտնուինք: Բայց չմոռնանք նաեւ դուրս հանել զուիցերական զրօշակը, որ միասին բերած էինք: Ան ծածանեցաւ Ասիոյ մէջ ալ 5200 մէթր բարձրութեան վրայ, ողջոյն տար հայրենիքին և ակնարկ մը նետէ Հիմալայա լեռներուն:

Իսկ այժմ դէպի վար փլածքներու, ապառաժներու և սառցակոյտներու վրայէ պէտք է թռչէինք. բայց չառ ծանր ու դանդաղ կը յառաջանանք յուսահատօրէն. վերջալոյսը պիտ սկսի մինչև սառցակոյտի լանջերուն հոսնինք, միայն մութ գիշերը պիտի հասնինք գիշերահանգստի վայրը: Առանց քիւրդին չպիտի կըրնայինք երբեք զայն գտնել, յարգանք իրեն, մինչև այն ատեն անոր քիչ պէտք ունեցանք: Իսկապէս պէտք էր որ հոս բաւական բան ունենայինք, բաժակ մը թէյ, տաքուկ բան մը, բաժակ մը գինի, ուտելու բանիկ մը. առհասարակ զովայուցիչ մը կարեւոր էր. բայց սպասեցէք, բարի Ստոմպլոս տուփ մը պահածոյ կեռաս թողացուցած էր, որ ճաշակեցինք: Պէտք էր ամբողջ երկու

Ժամ սպասէինք լուսնի ծագելուն: Լապտեր չունէինք, ճամպան ալ վատ է մութին առաջ երթալու:

Առտուն Ժամը 2-ին Երեւալէս Սարգսր բուլախի զօրանոցն ենք, կըելու աստիճան յոգնած: Ննջասրահի մէջ յատակին զինւորներու խարտիներու—Լափունջիներու մէջ փաթթուած ընկած են խոր քնոյ մէջ մեղմէ առաջ Մասիսի վերելքէն վերադարձողները: Ապրիս գոկտ. Թ. Էրիսման. բարի մարդը մեզի համար հոգացած էր: Թէյ և տաք ապուրը պատրաստ են: Ի՞նչ համով են: Մեզի կոշտ յատակի վրայ հանգչելու համար մէկ Ժամ շնորհուած է: Ժամը 4-ին նորէն պէտք է ելլել և հետևիլ բուսարաններուն, որոնք տեղ մը կերուխումի են և ուտելով զբաղած: Կերթանք արգէն դէպի վար և այրող արևը նորէն կը նեղէ մեր մօրթը, որ երեկ սառցալերան օդը այրած էր. կէս մը հիւծուած կերթանք դէպի Արալըխ: Բայց բան մը կարելի չէ գտնել: Դէպ յառաջ, միշտ յառաջ և փոշի ամպերով թաթախուած կը վերադառնանք Երասի և անդին դէպի Կամարլու: Եւ ճիշտ հիմա անոնք ալ մէկնած են: Մեր շտապումը անօդուտ եղաւ: Բայց երկաթուղու վագոն մը մեզի համար թողուցած են և բայառիկ զնայքի մը համար հոգացած: Պարզ ճաշ մը պատրաստ էր և սքանչելի խաղող ալ մեզի մատուցին վագոնի մէջ, երբ երկուցեան Ժամը 4-էն վերջը անոնք հետևեցանք դէպի Երևան:

Երևանի մասին չատ բան ըսելիք չունինք. աւելի գիտակիցները կրնան նկարագրել: Մեսրոպ Եպիսկոպոսը միասին տարաւ, երեկոյեան հասնելէ յետոյ հոգեորական Ի. Կոլլերը, դոկտ. Էրիզմանը և զիս Երևանի Եպիսկոպոսի ընտանեկան չափազանց մաքուր վանական տունը, որ ծանօթացանք նաև Թաւրիզի Եպիսկոպոսներուն, բարձր կրթութեամբ ազնիւ մարդիկ: Ասոնք հետ անցուցինք ներքեւ կարկաչող գետի վրայ դնուած օդասուն պատշգամին վրայ մեր իրիկունը և երբեք չպիտի մոռնանք հրաշալի տեսարանը նկարագրել գաւառէն դէպի Մասիս, ինչպէս նաեւ վայելած սիրալիր ասպնջականութիւնը և հետաքրքիր խօսակցութիւնը: Սա արժանի վախճան մը եղաւ սքանչելի վերելքին և

գիշերը վազոնի մէջ թուլածներու րնակարանը պէտք չունենա
քնանալու օրօրի:

Բայց ոչ միայն այն գիշերը, դեռ շատ մը յաջորդները, նոյնիսկ դեռ այսօր շարունակ ու շարունակ կը բարձրանայ կախարդիչ պատկերը սրբազան լեռան՝ Մասիսին մեր մէջ. ողջօրն մը անոր ասկէ ալ:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՄԷՋ

Սքանչելի գեղեցկութեամբ Արարատեան զաշտի կեդրոնը ընկած է հին անուանի հայկական էջմիածին վանքը, ամենայն հայոց կաթողիկոսի, Եկեղեցական գերագոյն պետի աթոռը:

Շատ հեռուները կը թափառի ակնարկը ընդարձակ, բերրի բարձրադիր տափարակի վրայ: Միայն հեռու հորիզոնի վրայ մի գոտ հեռաւորութեան վրայ կ'եղերուի հրաշալի առանձնայատուկ տարածութիւնը բարձր լեռնաշղթաներով և մասնակի հսկայական լեռնակատարներով: Ամենէն աւելի բարձրակարկաւ, սակայն 5160 մետր բարձրութեամբ Մեծ Մասիսը իր վիթխարի կերպարանքով կը գերէ անմիջապէս իր պարզ, բայց և այնպէս մի գեղեցիկ ուրուագծով սիրտն ու միտքը ամեն դիտողի: Ակամայ մարդուս աչքը կառչած կը մնայ Հայաստանի լեռներու այս հսկային և անկէ կարելի չէ այլևս կորզուիլ: Այս բարձրաւանդակի վրայ գտնուած միւս բոլոր բարձր կատարները, նոյնիսկ 4000 մետրը անցնողները, անոր դրացնութեան մէջ աննշան կ'երևան: Նոյն յարաբերութեան մէջ են Փոքր Մասիսը, Արան, Արմաղանը և նոյնիսկ եօթն կատար Արագածը: Նոյնան լեռան մօտ անոնք կ'երևան իրրև ստուեր, ստորադաս արբանեակի նման, իր մշտական սպիտակ ձիւնապատ գաղաթին պատճառաւ: Մեծ Մասիսը ի հնուց անդի կը կրէ նաև «Արևոտ լեռ» անունը: Ի վաղուց յետէ այս «Արևոտ լեռ»-ը ըրած է անսովոր, հզօր տեական ազդեցութիւն, բոլոր այն ժողովուրդներու վրայ, որ իր շուրջը ապրած են կամ մօտէն անցած: Ասոր վկայ են, թէ շրջապատող ցեղերու ընդհանուր յարգանքը, ինչպէս նաև այն բաղմաթիւ առասպելները անոր մասին:

Հանրածանօթ ջրհեղեղի աւանդութեանը հետ շատունց ի վեր

Պրոմէթէոսի զրոյցն ալ Մասիսի հետ կապած են: Անոր հերոսը՝
գիւշաղնը ըստ հայկական աւանդութեան հայ արքայորդի մ՝ էր
որ ի պատիժ հօրը կամքին ընդիմանալուն, ոչ թէ Կովկասի, այլ
Մասիսի ապառաժներուն շղթայուած պէտք է լինի: Ամեն Մասի-
սի գլուխը բարձրացողի ծանօթ է Սուրբ Յակոբայ աւանդու-
թիւնը, որուն արտօնուած չէ եղել սրբազան լեռան գաղաթին
ոտք զենել:

Նոյնիսկ էջմիածնի մայր եկեղեցու հիմնարկութիւնը կապ-
ւած է այս վեհաշուք լեռան հետ: Երազի մը մէջ կը հաղորդուի
սուրբ Գրիգորին ապագայ մայր եկեղեցու տեղը: Երբ նա այս
րանը կը պատմէ նորադարձ Տրդատ թագաւորին. սա Մասիսէն
կը բերէ իր թիկունքով եօթը վիթխարի քար և ասոնցով կը կա-
ռուցանէ ամբողջ մայր եկեղեցին:

Քաղաքական և աշխարհադրական հայկաշքով Արարատեան
տափարակը եղած է Հայաստանի կեդրոնը: Շնորհիւ իր բարձր
պտղարեութեան անոր բնակչութեան խառութիւնը աւելի բարձր
է հայկական միւս գաւառներէն: Քաղաքական անկախութեան ժա-
մանակ ալ, այս պատճառով, հոս է եղած հայ ժողովրդի աշխար-
հիկ զօրութեան գահը: Երկրի հին փառաշուք դարերուն հայ թա-
գաւորները փոխած են իրենց մայրաքաղաքը դարերու ընթացքին,
Արմաւիր, Արտաշատ, Դուին, Երուանդակեյրտ և Վաղարշապատ:
Ասոնք ամենն ալ կը գտնուին Երասխի վերին հովիտներու վրայ:
Այս քաղաքները վաղուց աւերակոյտեր են: Իրենց անունները մեծ
մասամբ մոռցուած են, նոյնիսկ յաճախ անոնց տեղերը վիճելի:
Շատոնց հոգեւորական վերին վարչութիւնն ալ հայ ժողովրդի,
Երասխի բարձրաւանդակի վրայ ունեցած է իր աթոռը միայն
առ ժամանակեայ կերպով անոր գեղավարութիւնը փոխադրուած
է ներկայ ռուսական Հայաստանէն դուրս տեղ:

Հայկական բարձրաւանդակի մէջ գործունէութեան չափա-
յանց ընդարձակ ասպարէզ կայ բնախոյզներու և պատմաքննիչ-
ներու համար: Շատ մը յայտմ անծանօթ միայած դանձեր հոն
գիւղուած են, անոնց մշակութիւնը անշուշտ չատ մը տեսակէտ-

ներով պարզաբանող ազդեցութիւն պիտ ընէն և նոր լոյս պիտի սփռէն անցեալի, այս ոչ միայն հայերու այլ և բոլոր հնդեւրոպական ազգերու համար, այնչափ կարեոր երկրներու վրայ: Ի բաց առեալ քանի մը աւելի պատահական աշխատութիւններէն, այս երկրի իսկական նախապատմութիւնը դեռ համարեա քննուած չէ: Ամենուրեք գտնուած քարի և անապաղոնձի դարերու պատկանած բազմաթիւ դամբարաններէն, շատ մը վիթխարի մոխրաբլուրներէն մինչև այժմ հազիւ քանի մը հատ բացուած են: Ասոնց ուսումնասիրութիւնները կարօտ են հիմնաւոր, գիտական և կանոնաւոր, սիստեմատիկ մարզանքով մշակողին:

Երկրորդ ուրարտական, խալդական ալ կոչուած դարէն մնացած են բազմաթիւ սեպագիր արձանագրութիւններ, ամրութիւններ, տաճարի և դղեակի աւերակներ, ջրարաշխական շինութիւններ և այլն: Ասոնք կը ցուցնեն, թէ համեմատաբար աւելի խիտ բնակութիւն և բաւական ուշագրաւ մշակոյթ եղած է: Հայաստանի շատ մը լեռներու, դետերու, դաշտավայրերու և տեղերու անուններ կը ծագին այս ժամանակէն: Այս դարու իրրիս գլխաւոր քաղաք կը յիշուի Վան, Բիաինա, Վանայ լճի մօտ և Սրմաւեր Երասխի ափին Արարատի առօրեային վրայ:

Հաւանաբար ութերորդ և իններորդ դարուն Գրիստոսէ առաջ, այնուհետեւ կատարուեցաւ արեւմուտքէն հայ ժողովրդի ներգաղթը՝ իրենց նոր հայրենիքին հայերը տուն իրենց անունը: Հակառակ բազդի դառն հարուածներուն և դարաւոր ամենաքրտւումնելի ճնշումին մինչև այսօր, ուրեմն մօտ 3000 տարի կարողացան մնալ: Ուժգին սիրով և տոկունութեամբ հայը կապւած կը մնայ իր նախահայրերէն աւանդուած հողին:

Հայկական բարձրաւանդակի վրայ բնակութիւն հաստատուէն հետէ սկսած է պատմական դարը: Ասկէ սկսած երկրի ճակատադիրը, գոնէ իր գլխաւոր գծերով ժամանակագրական կարգով յայտնի է: Հայկական բարձրաւանդակը դժուար և տեղ-տեղ ալ անանցանելի է համարեա: Բայց անոր սահմաններուն վրայ կը տարածուին ընդարձակ հարթ տափարակներ, որոց վրայէն

նուաճողները երկիր մտած են ինչպէս հարաւային կողմը Եփրատի եւ Տիգրիսի միջև ընկնող երկիրները, արեւելեան կողմը Երասխի եւ Կուրի յաճ տափարակները: Երբ թշնամին անգամ մը իր ձեռքը ունենայ այս տեղերը, հոն կը դանդ իր ժողովուրդին, իր հօտերուն եւ իր բանակին համար առատ սնունդ եւ նպաստաւոր խարիսխ մը բարձրաւանդակը թափանցելու: Այսպէս Հայաստանը հնուց ի վեր եղած է անցման երկիր, որ շարունակ օգտագործած են իրբեւ զինւորական ուղի ողջերու գաղթականութիւնները: Եզիպոտոսի փարաւոններու ջանքը իրենց ստացուածքը, Պաղեստինի վրայով դէպի հիւսիս տարածելու, աշխարհակալական արշաւանքները, պարսից երբեմնի հզօր իշխողներուն, Ալէքսանդր Մեծի նշանաւոր պատերազմական արշաւները դէպի Հնդկաստան, ասոնք բոլորն ալ Հայաստանը գործածած են իրբեւ երկիր-ճանապարհ, եւ որու սահմաններու վրայ մղած են իրենց պատերազմները: Դարեր տեւած է մեծ զօտեմարտ պարթեւներու եւ հռոմայեցիներու, յոյներու եւ պարսիկներու միջև եւ շարունակ դարձեալ այս բազմափորձ երկիրն է այս համաշխարհային պատերազմներու առթիւ ամենէն աւելի նեղութիւն կրողը: Շատ ուշ՝ միջին դարուն սկսաւ արեւելքէն մոնղոլական ժողովուրդներու գաղթականութիւնը: Հիւսիսի մէջ այս ժողովուրդներու զանգուածներ- կը շարժուէին Ռուսաստանի վրայով, հարաւի մէջ՝ Հայաստանի վրայով, ուր կը հաստատուէին, նստակեաց բնակիչները կը հնազանդեցնէին: Ասով կ'սկսի պայքարը հայերու եւ թաթարներու: Հիմա յարարերութիւններն այնպէս են, որ արեւմտեան երկիրներէն հակառակ հոսանք մը սկսած է: Անդադար թուրքական իշխանութիւնը քայլ առ քայլ կործանումով, արեւելքցիներու յետ մղումը դէպի արեւելք սկսած է:

Քաղաքական այս յեղաշրջումներու հետ միաժամանակ կը պտտահին այս համաշխարհային մրցարանի վրայ հոգեկան-մշտաւոր եւ կրօնական հոսանքները: Ասորարարելական եւ եզիպոտական քաղաքակրթութիւնը հոս սերտ շփման մէջ է մտած հնուց հին յունական եւ հոմեկական աշխարհահայեացքի հետ: Բրիտոս-

նէութիւնը շատ արագ մուտք ունեցաւ Հայաստանի մէջ և ասկէ տարածուեցաւ դէպի հիւսիս և արևելք: Այս հողի վրայ իրարու պատահեցան արեւմուտքէն եկած քրիստոնէութիւնը և արևելքէն եկած կրակապաշտական կրօնի հետ, որու տեղ աւելի ուշ զրաւեց իսլամի իշխանութիւնը:

Քաղաքական-կրօնական կամ քաղաքակրթական առաջնութեան գանազան իշխանութեանց ոգորումին մէջ հայ ժողովրդի ժողովուրդը խաղացած է կարևոր, թէև յաճախ կրաւորական դեր որոշ արժանիք մը ռահահորդ, արեւմտեան քաղաքակրթութեան և մասնաւորապէս քրիստոնէական աշխարհահայեացքի: Առաջաւոր Ասիոյ մէջ հայերուն ուրանալ կարելի չէ: Հայերը կը պատկանին արեւական ցեղին: Իրենց ներգաղթը դէպի իրենց այժմու հայրենիքը դեռ հաստատուած չէ գիտական անառարկելիութեամբ: Բայց պէտք է խոստովանել, որ հայը շատ համակրութիւն և ըմբռնում ունեցած է արեւմուտքի քաղաքակրթական շարժումներուն և այսպիսով Մօտաւոր Արևելքի մէջ կատարած է ան կարևոր առաքելութիւն մը: Այս միջնորդող դերը Արեւմուտքի և Արևելքի միջև նկատելի է մանաւանդ հայ ժողովուրդի քրիստոնէութեան դարձէն վերջը:

Յարատեւ պատերազմներու ընթացքին բաղձալիւ հին հայկական իշխանական տներ հետզհետէ անհետացան և ժողովուրդը տառնց աշխարհիկ առաջնորդներու յանձնուած է օտարակեցու և աշխահաւատ ու օտարացեղ ժողովուրդներու քահանայութիւն: Այսպիսով հայերը հետզհետէ կորցուցին իրենց անկախութիւնը շարունակեալ ճնշումովը զօրաւոր զրացի ազդերու: Բայց և այնպէս հայ ժողովուրդի համար, շնորհիւ իր քաղաքակրթական մեծ ընդունակութեան, դիւրին կը լինէր իր ստորադաս դերութենէն արագ մը իշխող լինել նուաճողներուն և առաջնորդող դեր մը զբաւել պետական կեանքի մէջ: Ընդունելով զինքը ճնշողներու կրօնը, ապահովարար իրեն համար ուղին կը բացուէր այդպիսի տիրական դիրքի մը: Բայց հայ ժողովուրդը նախամեծար համարեց ճշումը ուրացումէն: Այս բանը Եւրոպան չպէտք

էր մօռնալ, որ հայերը հաստատուն մնալով իրենց քրիստոնէական հաւատին ենթարկուեցան շարունակ առաջին և կատաղի յարձակումներուն հարաւէն և արեւելքէն արեւմուտք առաջացող արար, պարսիկ և մոնղոլ բարբարոս այլադաւան հրոսախումբներուն և իրենց դիմադրութեամբ առաջին ընդհարումը մասամբ տնարայուցին: Եւրոպայի պատմութեան զանազան էջերը հաւանարար այլապէս դրուէր, եթէ այս ժողովուրդները հայն ունեցած լինէին իրենց դաշնակից և հաւատակից: Այսօր եւրոպացիներու գիտակցութեան մէջ կ'որսուած է կատարելապէս հայերու մատուցած ծառայութիւնները: Հայկական հարցի յաճախակի քննադատութիւնը ասոր մէջ կը գտնէ գոնէ մասամբ իր պարզարանս թիւեր:

Հայ ժողովուրդի քրիստոնէութեան դարձը կատարուած է պատմական աղմկալի շրջանի մը: Ճիշդ այն տակն, երբ հռոմէական մեծ պետութիւնը արեւմտեան և արեւելեան կէտերու բաժնուեցաւ և Կոնստանտին Մեծը Բիւզանդիոն քաղաքը արեւելեան հռոմէական պետութեան մայրաքաղաք դարձուց: Ասով նա կը յուսար իր արեւելեան սահմանը աւելի լաւ պաշտպանել կարողանալ և պարսկական իշխանութեան դէպ արեւմուտք տարածումը աւելի ուժգնորէն արգելի: Բայց Պարսկաստանի մէջ համարեա նոյն ժամանակ կատարուեցաւ մեծ տարողութեամբ յեղաշրջում մը: Հին, ինքեան քայքայուած պարթեական հարստութեան տեղ եկած էր ազգային պարսկական սերունդը Սասանեաններու որդեւոր, ոչ միայն ստացած զօրութիւնը պահպանելու, այլ և երկրի թշնամի արեւելեան հռոմէական պետութիւնը յետ մղել: Ասոնք պարսկացիներ էին, որ կը թոյլատրէին տեսնել նորոգ պայքար մը Արեւմուտքի և Արեւելքի մէջ:

Այս պարսկացիներու մէջ հայերու զիրքը երկու կառավարութեանց իւրաքանչիւրի համար մեծ կարեւորութիւն ունէր: Ճիշդ այդ ժամանակ չորրորդ դարու սկիզբը Հայաստան կը գտնուայ քրիստոնեայ և այս պատճառաւ աւելի կը կապուի յոյներուն: Այս օրերէն սկսած Հայաստանը կիցնայ, ոչ միայն քաղաքական, այլ այժմ ալ կրօնական պատճառներով, Պարսկաստանի հակառա-

կորզներու շարքը: Այսպէս յոյները դտան հաւատարիմ թանկագին դաշնակից: Դժբաղդարար, սակայն, անոր պատշաճ ժամանակին և կարող բաւարար միջոյներով չկրցան օգնել: Հետեանքըն եղաւ ոչ միայն Հայաստանի կորուստը, այլ և աւելի ուշ նաեւ քայքայուած սեփական պետութեան:

Հայաստանի նոյնիսկ ամենամակերեսային ճանչցողը զիտէ թէ այս երկրի ճակատագիրը ամենասերտ կերպով կապուած էր Առաջաւոր Ասիոյ զանազան կրօնական ըմբռնումներուն և դաւանանքներուն: Հայաստանի պատմութիւնը, շարունակեալ կրօնի պատմութիւն մը, հինգերորդ դարու կէսուն բորբոքեցաւ ազդային-կրօնական պատերազմը ընդդէմ կրակապաշտ պարսիկներուն, ապա եօթերորդ դարէն սկսած կը յաջորդէ տիտանական պայքարը մահմետական արարներու հետ: Տասներեքերորդ դարէն կ'սկսի ժողովուրդի մեծ նահատակութիւնը, իսլամ մանդրական անմարդկային տիրապետութեան տակ: Որչափ թշուառութիւն, որչափ դաղտնի ծաղկող զիւշացնութիւն և կեանքի բարիքներու մերժում չեն պատմեր մեզի այս ստիպաւ և չոր տուեալները, բայց ասոնք կը վիճակն ալ, թէ հայ պատմութիւնը միջին դարու ըսկիզբները եղած է դիւստորապէս կրօնի պատմութիւն:

Մեզ կը ճնշէ այն հարցումը, թէ ի՞նչպէս եղաւ, որ փոքր, ասկէ դատ քաղաքականապէս այսչափ աննպաստ պայմաններու մէջ գտնուած ժողովուրդ մը այսչափ կանուխ ընդունեց քրիստոնէութիւնը և դարեր զայն պահեց հակառակ անոր հետ կապուած բազմի ծանր հարուածներուն:

Առաջին աւետումը ուրախալի պատգամին հայկական երկիրներու մէջ չի պատկաներ աւանդութեան: Իրրեւ թէ դեռ Գրիստոսի ժամանակ հայոց Արքար թագաւորը եղեսիոյ մէջ վարդապետին հաւատացած է և Թադէոս առաքեալի ձեռամբ մկրտուած: Իրականութիւն է, որ այն ատեն Հայաստանը իրրեւ հռոմէական պետութեան հարկատու չափազանց ազդուած էր յունահռոմէական քաղաքակրթութեանէն: Հռոմի հետ աշխուժ քաղաքական և առևտրական յարաբերութեան մէջ կը դառնէր: Ասորիքի վրայէն

բաղմապիտի կապեր ունէր երկիրը Պաղեստինի հետ: Այսպիսով եկան առաջին քարաղիչները շատ կանուխ Հայաստան: Կրնայ լինել, որ շատ մը ուղեսէրներ, երկրացիներ ուրախ պատգամը բերած լինեն արեւմտեան երկներէն իրենց հայրենիքը: Հակառակ ասոր երեք զար տեւեց, մինչեւ որ հայ ժողովուրդը այնչափ նախապարաստուած էր: որ Տրդատ թագաւորը կը կարողանայ նոր վարդապետութիւնը պետական կրօնք յայտարարել և զինքն իր ամբողջ ընտանիքով ու ժողովուրդով մկրտել տալ:

Գրիգոր Լուսաւորիչն է Հայաստանի բուն առաքեալը. անոր պիտի վերադրել զլիաւորարար քրիստոնէութեան յալածանակը: Ըստ աւանդութեան նա արչակունի է, չառաւիղ մը հայ-սարսկական հարստութեան: Իր ուսումն ստացաւ, ինչպէս նաեւ քրիստոնէական կրօնի ծանօթութիւնը ունեցաւ Կապադովիոյ Կեսարիա քաղաքին մէջ, ուր իրրեւ մանուկ իր թշնամիներու մօտ ապաստան որոնած և դտած էր: Իրրեւ հիմնադիր հայ ազգային եկեղեցւոյ Ս. Գրիգոր կը վայելէ այնքան մեծ համարում, որպիսին ոչ իր մէջ առաջ և ոչ ալ վերջը որեւէ անձնաւորութիւն վայելած է: Այս բանը կ'երեւայ այն փաստէն, որ հայ եկեղեցին շատ անգամ Գրիգորեան Առաքելական կամ Լուսաւորչական եկեղեցի կ'ըսուի: «Լուսաւորիչ» մականորն ալ կը վկայէ այն մեծ յարգանքի մասին, որ նա կը վայելէ հայ ժողովուրդի գիտակցութեան մէջ:

Գրիգոր Լուսաւորիչ հայերը միայն քրիստոնեայ չզարձուց. նա իր ժողովրդին տուաւ նաեւ եկեղեցական սահմանադրութիւնն ու նուիրապետութիւնը: Մինչեւ հիմա այս բանը տիրողն է իր գլխաւոր գծերով, որ ժողովրդի քաղաքական և եկեղեցական կեանքի մէջ յաճախ արտաստովոր զեր կատարած է:

Ինչպէս յիշեցինք, Հայաստանը սերտ յարաբերութիւններ ունեցաւ Ասորիքի և մանաւանդ Փոքր Ասիոյ յոյներուն հետ: Ասոր հաջեմատ ալ երկրի կրօնական կեանքը երկու ժողովուրդներէն ալ ազդուած է, այն ալ սկիզբները մինչեւ հինգերորդ դարու կէսը աւելի ասորիներէն, վերջը բացառապէս յոյներէն: Քանի որ Ս. Գրիգոր յոյներու մէջ մեծցած է և անոնցմէ կրթութիւն տուած,

հասկանալի է, թէ այս ժողովուրդէն օրինակ պիտ առնէր հայ եկեղեցու սահմանադրութիւնը կազմելու համար. ամեն պարագայի, սակայն ընդօրինակութիւն մը չէ յաւանդելին, այլ հայրենական պէտքերուն բոլորովին պատշաճ եկեղեցական կանոնադրութիւն մը:

Թագաւորի մկրտութիւնէն յետոյ Ս. Գրիգոր անշաւ ամրողջ երկիրը և ամեն տեղ կանգնեց խաչի նշանը: Այս տեղերը վերջը եկեղեցի շինեցին: Էջմիածնի մայր եկեղեցին և մօտակայ երեք վանքերը՝ Գայիալէի, Հռիփսիմիի և Շողակաքի, Գրիգոր լուսաւորչի հիմնարկածներն են: Աղկէ անցեր է տասնհօթը դար, յաճախ քայքայուած և վերստին շինուած, ամրողջապէս փոփոխուած և վերանորոգուած են: Ամեն մէկ հաւատացեալի և ազգային զգացումով հայու սրտին մէջ այս շէնքերը իրրեւ ազգային սրբութիւններ կը գրաւեն բարձրայարգ տեղ: Աւանդութիւններով չաղապատուած են այս բոլոր պատկառազու շէնքերը. դեռ Թագաւորի և իր հետերդներու դարձի յաջորդ գիշերը Ս. Գրիգոր հրաշալի երազ մը տեսած կը լինի, որու մէջ Բրիտանիոյ ինքը կը ցուցնէ տեղն ու ուրուապիծը հիմնարկելիք եկեղեցուն. — «Միածին որդին երկնքէն վար իջաւ», այս է Էջմիածին բառի թարգմանութիւնը: Ըստ աւանդութեան Գայիանէի և Հռիփսիմէի վանքերու խորաններուն ներքեւ թաղուած են երկու նահատակուած կոյսերու մարմինները: Երբ եօթերորդ դարու մէջ Կոմիտաս կաթողիկոս Հռիփսիմէի եկեղեցին բոլորովին նոր կառուցանել կ'ուտայ, կը գտնին սուրբի դաղաղը, կնքուած Ս. Գրիգորի և Ս. Սահակի կնիքով: Մարմինը դեռ անաղարտ մնայած էր: Այս միջադէպը պատճառ եղած է հայերէն հրաշալի շարականի մը, տաղի մը, որ հիմա ալ սուրբի աօնին կ'երգեն: Նուազ յարգուած չէ նմանապէս Ս. Գրիգորի հիմնած վանքը Մուշի մօտ թուրքական Հայաստանի մէջ:

Կեսարիոյ մէջ Ս. Գրիգոր, որ արքեպիսկոպոս ձեռնադրուեցաւ, աւելի ուշ եղաւ ամենայն հայոյ կաթողիկոս: Նա երկիրը բաժնեց տասներկու եպիսկոպոսութեան, որոց իւրաքանչիւրի

համար եպիսկոպոս նշանակեց երբեմնի հեթանոսական քահանաներու նշանաւորագոյններէն: Այս խելացի քայլով զրաւեց երկրացի ազգեցիկ հակառակորդներու սրտերը: Նոր կրօնի թշնամիները եղան նախանձաւոր կողմնակիցներ: Ուրիշ ուղղութեամբ ալ նա ցոյց տուաւ մեծ հեռատեսութիւն և մարդածանօթութիւն: Ժողովուրդի հեթանոսական տօնական օրերը, որոց հոգւով սըրտով փարած էր Գրիգոր լուսաւորիչ պահեց այդ տօները, միայն անոնց նոր անուններ տուաւ և նոր նշանակութիւն, որով տառնք եղան քրիստոնէական տօներ և հանդիսաւոր օրեր: Թէև ծագումով Պարսկաստանէ, սակայն կը պատկանէր ինչպէս յիշեցինք նախապէս երկրի բարձրագոյն իշխանական տան, այս պարագան ալ իրեն տուաւ կարևոր անձնական հեղինակութիւն: Ասով յաջողեցաւ հիմնել զօրաւոր եկեղեցի մը և հակազդեցութենէ ազատ մնալ, զոր հակադարձ զօրութիւնները խաւարի չկրցան սասանեցնել: Քիչ բացառութիւններով այդ կաթողիկոսական աթոռ — պաշտօնը մնաց նոյն ընտանիքի մէջ մինչև հինգերորդ դարու կէսը: Այդ ընտանիքին կը պարտի երկիրը քաղաքական և հոգեւոր անուանի անձնաւորութիւններ, ինչպէս օրի. Ներսէս Մեծը և սուրբ Սահակ հիմնադիրը եկեղեցական ազգային զրահանութեան և աստուածաշունչի թարգմանիչը: Մէկ քանին նահատակեցան. աշտպիսով լաւ դործը ունեցաւ իր արեան օծումը:

Հայ եկեղեցու սկզբնաւորութիւնը այնպիսի ժամանակի մը կը պատահի, երբ հայ թագաւորներու աշխարհիկ իշխանութիւնը անկումի սկսած էր: Հին արշակունեաց հարստութեան վերջին ներկայացուցիչները շատ աննշան էին համեմատած Սուրբ Գրիգորի յաջորդներու կաթողիկոսական արժանաւորութեան:

Այսպիսով հոգեւորական բարձր պաշտօնականերու ազդեցութիւնը արաւել զօրացաւ, ազգը սորվեցաւ նեղութեանց ժամանակ զիմել հոգեւորականութեան և անկէ խորհուրդ և օգնութիւն ընտանալու: Այսպիսով եկեղեցու զիրքը երթալով ամբաշաւ, ան շուտով ստանձնեց ոչ միայն եկեղեցական կրօնական դործերու ղեկավարութիւնը, այլև ազգային մշակութային և նոյն իր ազ-

դեյութիւնը բանեցուց ազգի քաղաքական կեանքի վրայ:

Մեծ նախնին ունեցաւ կարգ մը համարժէք յաջորդներ, ինչպէս վերը հիշուած երկու կաթողիկոսներ, Ներսէս և Ստեփաննոս Մեծն կը կոչուէին զլիաւորարար իր առաապելական եղած քրիստոնէական գլխաւորութեան, բարեգործութեան և զոհարարող աշխարհութեան պատճառաւ: Նա հիմնեց բազմաթիւ վանքեր, մասնաւորապէս անուղի դաժան ձմեռն և տօթ ամառն թափառող ճանապարհորդին ապաստան և օգնութիւն տալու համար: Նա եղաւ առաջինը, որ մարդկային ընկերութենէ ամալուծութիւնները վաարուած բորոտները հաւաքէ, անոնց բնակարան և կանոնաւոր սնունդ տուաւ և իր ժամանակակիցներուն սորվեցուց զբարոյներուն հետ վարուել: Իր աշակերտները կրթեց որբերուն, աշխարհներուն և ազգատներուն հանգիստ քրիստոնէական բարեգործութիւն ընել, իր տրամադրութեան տակ եղած ամեն միջոցներով ալ պայքարելու հիթանոսական սովորութեանց վերջին մնացորդներու դէմ: սոսկալի սղըր մահուան տաւն, երբ մեռելով պարագաները յաճախ անձնասպան կը լինէին, այնուհետեւ բազմակնութիւնը, մօտաւոր ամուսնութիւն և այլն: Շնորհիւ իր մեծ համբաւին կրնար ձեռնամուխ լինել իր երկրի քաղաքական խառնաշփոթութեանց, մեծ մասամբ իրեն միջնորդ բիւզանդական կայսերական և հայ թագաւորներուն միջև կամ տոնց և բնիկ ապստամբ իշխաններու միջև:

Պակաս օրհնարեր չեղաւ իր թուր՝ Սահակ կաթողիկոսը: Նորա ներքեւ Սուրբ Մեսրոպ զտաւ հայ գրերը և ասով զբաւ խակական հիմնաքարը հայ առանձին մշակույթին: Իրմէ առաջ հայ եկեղեցու մէջ լեզուներն էին ասորականն ու յունականը, հայ լեզուի գործածութիւնը, ստեղծումը առանձին գրականութեան և արուեստի՝ հետզհետէ պէտք դարձաւ: Երբ Ներսէս զլիաւորարար կը հրգար աղքատներուն և անօգնականներուն համար, Սահակ նուիրուեցաւ զլիաւորարար զպրօցով: Ամբողջ երկրի մէջ հիմնեց զանազան աստիճանի դպրոցներ, ամենաընդունակ երիտաւարները կ'ուղարկէր իրենց ուսումը կատարելագոծելու առ-

րիք, Ալեքսանդրիա, Աթէնք և Հռոմ ինչպէս նաեւ յունահռոմէական նշանաւոր կեդրոնները քաղաքակրթութեան: Այս աղբային պատմութեամբ և դրականութեամբ ուսեալ գիտունները կէս դարու կարճ ժամանակի մէջ հայերէնի թարգմանեցին յոյներու, հռոմայեցիներու և ասորիներու եկեղեցական գրքերն ու լաւագոյն գրութեանքները և ասոնց հետ նաեւ արապերէցին սեփական երկեր: Այս շարժման գլուխ կանգնած էր Սահակ Կաթողիկոսը ոչ միայն իրրեւ թարգմանիչ և ինքնուրոյն հեղինակ, այլ և իրրեւ խրախուսող այս բոլոր քանքերուն մեծ արժանիք ցոյց տուաւ: Այս եղաւ հայ գրականութեան ոսկեդարը:

Շնորհիւ այս նպաստաւոր պայմաններուն, շնորհիւ մանաւանդ և հայ բարձր հոգեւորականութեան նշանաւոր ներկայացուցիչներուն անձնուէր գործունէութեան քրիստոնէական կրօնը խորը արմատներ ձգեց Հայաստանի մէջ շատ կանուխ: Եկեղեցու դործոն մարդասիրական աշխատութիւնը, սակզծումն ու զարգացումը հայկական գրականութեան մը և արուեստի մը կազմեցին նոր ժամանակի խարխալը: Երկրի մէջ առաջ եկած զրոյցներու և աւանդութեանց միջոցաւ եկեղեցին շատ ժողովրդական դարձաւ: Այսպիսի հոգեւոր բովանդակութեամբ զինուած հայ եկեղեցին ստացաւ ներքին զօրութիւն մը և տոկութիւն մը, որ կարելի դարձուցին դարեր ծանրագոյն բաղդի հարուածներուն դիմադրել, առանց պարտուելու:

Յաջորդ դարերուն ալ հայ եկեղեցին կուտայ բաւական անւանի ներկայացուցիչներ, որոնք իր նշանակութիւնն ու ազդեցութիւնը ըստ կարելւոյն կը բարձրացնեն: Կարելի է ըսել, թէ ամբողջ նուիրապետութիւնն ամեն ատեն հաւատարիմ մնացած է եկեղեցական կանոններուն և ազգի մշակութային գործերուն:

Էջմիածնի մատենադարանի մէջ ա՛յժմ կը գտնուին 4500 հայերէն ձեռագիրներ: Սա մէկ չնչին մասն է սակայն հայերու գրական գործունէութեան եօթերորդ դարէն սկսած: Թղթի տեղ կը գործածուէր հին դարուն և միջնադարի սկիզբը հաստ կամ շատ նուրբ մազաղագ, աւելի վերջի գրութեանքները թղթի վրայ են. ասոնք

անտարակոյս բոլորն ալ խսկական, չափազանց թանկագին վաւերաթղթեր են վաղուց անյայտացած ժամանակներու: Այս պատճառաւ անառարկելի վկայութիւն են հայերու քաղաքակրթական պահանջին և ստեղծագործական սիրուն, զանազան դարերու տրպագրութեան դիւտէն առաջ:

Գրելու, գծագրելու, մանրանկարներու արտագրութեան և գրելու նիւթերու ճարտարութիւնը կարող են շատ մը պատմական յայտացողութիւններէ աւելի դադափար տալ հայերու առաջնայ ժամանակներու կրթութեան պէտքերու մասին: Անոնք կը սորվեցնեն արուեստի ճաշակը, ճարտարութիւնը և գրական գործունէութիւնը, որ միշտ համարեա լաւ արդիւնք տուած են: Բոլոր ձեռագիրները գրուած են եկեղեցիի կամ իր ներկայացուցիչներու համար և մեծ մասամբ հոգեւորականներու ձեռամբ: Այս հսկայական աշխատութեան մէջ ալ պիտի տեսնենք տալացոյց եկեղեցու մեծ կենսունակութիւնը:

Ով անգամ մը առիթ ունեցած է Հայաստանի մէջ ամեն տեղ նոյնիսկ մեկուսի վայրերը ճամպորդել, ով անհամար, մեծ մասամբ աւելի եկեղեցիներուն ու վանքերու շէնքերը տեսել է, ով այցելած է աւերակներու քաղաք Անի, ով մանաւանդ Հաղբատի, Սանահնի, Գոշավանքի, Խոթավանքի, Գանձասարի, Տաքեի վանքերը և ուրիշները կը ճանչնայ, ով քարէ նուրբ փորագրութեամբ դամբարանները տեսնելով հիացել է, նա կը յուսամ թէ ինձի հետ համաձայն պիտի լինի, թէ հայերու մօտ կարելի չէ ժխտել քաղաքակիրթ ժողովուրդի մը դիրքը և ստեղծագործութեան սէրը: Ճարտարապետութեան մէջ ալ մեծ գործեր արտագրած են:

Երբ մարդ աչքի առաջ կը բերէ այս բոլոր լուսթեան մէջ կատարուած քաղաքակրթութեան գործերը, որ անշեղ, դարերու ընթացքին անխոնջ տոկունութեամբ կատարուած են, չկրնար ժխտել այն տպաւորութիւնը, թէ հայ եկեղեցին ապրած է իր սեփական կեանքը անուշադիր այն զարհուրելի հալածանքներուն, անուշադիր նաև անոր համար, որ ռահվիրայական աշխատութեան մէջ մեծ մասը նորէն խանդարուեցաւ:

Այս հարուստ բովանդակութեան և իր դործերու հետ իբրև ճշմարիտ ապաւէն հաւատաշէշներուն ծառայելու հայ եկեղեցին ինքն իրեն ալ արտաքուստ ձևեր տուած է, որ կ'երաշխաւորեն իր մեծ ժողովրդականութիւնը և իր ազգային նկարագիրը։ Այս բանը կը ցուցնէ անոր ճիշդ ժողովրդավար սահմանադրութիւնը, վարչութիւնը և նուիրապետութիւնը։ Հոգեւորականութեան գլուխն է ամենայն հայոց կաթողիկոսը։ Հայերու պապի պաշտօնավայրն էջմիածնի վանքն է, զոր այդ պատճառաւ, Ս. Գրիգոր արգէն որոշած էր․ ժամանակի ընթացքին կաթողիկոսները, թէ իրենց աթոռը յաճախ ուրիշ քաղաքներ կամ վանքեր փոխադրած են, բայց շարունակ անմիջապէս, որ պարագաները ներած են կըրկին վերադարձրած են էջմիածին։ Կաթողիկոսի պաշտօնը ցմահ է։ Ի հնումը նա կ'ընտրուէր իշխաններու և հոգեւորականներու կողմէ, իսկ հիմա հոգեւորականներու ներկայացուցիչներու և ամբողջ ժողովրդի կողմէ, իսկական Հայաստանի և արտասահմանի։ Էջմիածնի կաթողիկոսէն դատ կայ երկու ուրիշ կաթողիկոս ալ, Կիլիկիոյ Սիս քաղաքին մէջ և Ախթամարի վանքին մէջ, համանուն կղզիին վրայ, Վանայ լճին մէջ։ Ասոնք հնէն մնացած հետքեր են, բայց իրենց ազդեցութեան սահմաններէն դուրս, առանց որեւէ նշանակութեան։ Հիւսիսային Հայաստանի Ռուսաստան դառնալէ ասդին, պէտք է նորընտիր կաթողիկոսը ռուսաց ցարէն հաստատուի։ Եւ այնուհետեւ միայն կը հետեւի շատ հանդիսաւոր, մեծաշուք արարողութիւնը օծման։ Կաթողիկոս կրնան ընտրուել արքեպիսկոպոսներէն և եպիսկոպոսներէն, հին ատենները վանականները և նոյնիսկ աշխարհականները ընտրելի էին։ Կ. Պոլսոյ և Երուսաղէմի պատրեարքները արքեպիսկոպոսի աստիճան ունին, ասոնք օծում չունին և իրենց պաշտօնը ցմահ չէ անսպասման։

Եկեղեցու դոյքի և վրամներու վարչութիւնը գլխաւորաբար աշխարհականներու ձեռքն է, որ համայնքներէն կ'ընտրուին և սոքա կը վարեն նաև եկեղեցական դպրոցները։

Այսպէս ժողովուրդն ու հոգեւորականութիւնը իրենց չահ-

րով իրարու սերտ կապուած են: Աղետալի պատահարներով այն-
չափ հարուստ հայ պատմութեան մէջ, իր ծանր օրերուն նոքա
միշտ հաւատարիմ մնացած են իրարու և այս միութեան մէջ ար-
գելքներ յաղթելու րարոյական կորովն ու մխիթարութիւնը զը-
տած է:

Հիմա ալ երբ դեռ հայ ժողովուրդի մէկ մեծ մասը թուր-
քական բռնապետութեան տակ անասելի ճնշում կը կրէ և վերջ-
նական լուծում մը կ'ըսպասուի արևմուտքի քրիստոնեայ պե-
տութեանց ժողովուրդներու միջոցաւ աշխարհի ամեն կողմ ցըր-
ւած հայերը մնացած, շատ մը խնդիրներով դիմած են իրենց հո-
գևոր պետին յուսալով, որ միջոյն ու ուղին պիտի գտնէ մեծ
պետութեանց ներկայացուցիչներու սրտերը զրաւելու, իր ժողո-
վուրդի արդար դատին համար:

Այսպէս հայերը կը յուսան, որ Եւրոպայի ժողովուրդները
չուտափոյտ օգնութիւն պիտ ընեն իրենց, անոք և Քիլիքական
ոչնչացումի մօտ դտնուող հաւատակիյններուն:



գսԱ Հիմնարար գիտ. գրադ.



220035107

(12)

A II
35107